AZG NEW 11.QXD 9/1/2009 12:31 AM Page 1

Ազգ Azg

1 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2009 ԵՐԵՔՇԱԲԹԻ 155 (4297)

ISSN: 1829-1651

Սեպտեմբերի 1



# Հայաստան-Թուրքիա դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացն սկսվեց

***Երեկ ուշ գիշերին, երեք մայրաքաղաքներից՝ Բեռնից (Շվեյցարիա), Երեւանից եւ Անկարայից միաժամանակ հրապարակվեց մամլո միացյալ հաղորդագրություն, ըստ որի Հայաստանն ու Թուրքիան սկսում են «իրենց ներքին խորհրդակցությունները» դիվանագիտական հարաբերություններ հաստատելու եւ «երկկողմանի հարաբերություններ զարգացնելու» շուրջ, հիմք ընդունելով համապատասխան զույգ պրոտոկոլները, որոնք, ինչպես հաղորդագրությունը, ստորեւ հրապարակում ենք նույնությամբ: Առայժմ ձեռնպահ մնալով մեկնաբանություններից, ուզում ենք ընթերցողների ուշադրությունը սեւեռել «ներքին խորհրդակցությունների» համար սահմանված 6 շաբաթյա պայմանաժամի շուրջ, որի ավարտը համապատասխանում է Թուրքիա-Հայաստան հաջորդ՝ հոկտեմբերի 14-ի ֆուտբոլային մրցմանը, որին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը խոստացել էր ներկա գտնվել, եթե մինչ այդ հարաբերությունների հաստատման եւ սահմանների վերաբացման նախաշեմին գտնվեն երկու երկրները:***

### ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՇՆԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունը եւ Թուրքիայի Հանրապետությունը համաձայնեցին սկսել ներքին քաղաքական խորհրդակցություններ՝ շվեյցարական միջնորդությամբ իրականացվող բանակցությունների ընթացքում նախաստորագրված հետեւյալ երկու արձանագրությունների շուրջ. «Արձանագրություն երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին» եւ «Արձանագրություն երկկողմ հարաբերությունների զարգացման մասին»:

Հիշյալ երկու Արձանագրությունները սահմանում են խելամիտ ժամկետում երկկողմ հարաբերությունների կարգավորման շրջանակ: Ներքին քաղաքական խորհրդակցությունները կավարտվեն վեց շաբաթվա ընթացքում, որից հետո երկու Արաձանագրությունները կստորագրվեն եւ կներկայացվեն համապատասխան խորհրդարաններին՝ վավերացման համար: Երկու կողմերը կգործադրեն իրենց առավելագույն ջանքերը վավերացման արագ առաջընթացի համար՝ համաձայն իրենց սահմանադրական եւ օրենսդրական գործընթացների:

Երկկողմ հարաբերությունների կարգավորումը կնպաստի տարածաշրջանային խաղաղությանն ու կայունությանը:

Հայաստանի Հանրապետությունը եւ Թուրքիայի Հանրապետությունը հանձն են առնում շարունակել համատեղ ջանքերը Շվեյցարիայի օժանդակությամբ:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունը.

**Ձգտելով** հաստատել բարիդրացիական հարաբերություններ և զարգացնել երկկողմ համագործակցությունը քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում՝ ի շահ իրենց ժողովուրդների՝ համաձայն հարաբերությունների զարգացման մասին նույն օրը ստորագրված Արձանագրության,

**Վկայակոչելով** ՄԱԿ-ի Կանոնադրությամբ, Հելսինկյան Եզրափակիչ ակտով, Նոր Եվրոպայի համար Փարիզյան խարտիայով իրենց ստանձնած պարտավորությունները,

**Վերահաստատելով** հավասարության, ինքնիշխանության, այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու, տարածքային ամբողջականության և սահմանների անխախտելիության սկզբունքները հարգելու իրենց երկկողմ և բազմակողմ պարտավորությունները,

**Հաշվի առնելով** երկու երկրների միջև՝ ամբողջ տարածաշրջանում խաղաղության, անվտանգության և կայունության ամրապնդմանը նպաստող, հավասի և վստահության միջավայր ստեղծելու, ուժի կիրառումից կամ դրա սպառնալիքից զերծ մնալու, վեճերի խաղաղ կարգավորման, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման մթնոլորտ ստեղծելու կարևորությունը,

**Վերահաստատելով** երկու երկրների միջև գոյություն ունեցող ընդհանուր սահմանի փոխադարձ ճանաչումը՝ սահմանված միջազգային իրավունքի համապատասխան պայմանագրերով,

**Կարևորելով** իրենց որոշումը՝ բացելու ընդհանուր սահմանը,

**Հաստատելով** իրենց հանձնառությունը՝ ձեռնպահ մնալ բարիդրացիական հարաբերությունների ոգուն չհամապատասխանող քաղաքականություն վարելուց,

**Դատապարտելով** ահաբեկչության, բռնության և ծայրահեղականության բոլոր ձևերը՝ անկախ դրանց պատճառներից և խոստանալով ձեռնպահ մնալ նման գործողությունները խրախուսելուց ու հանդուրժելուց և համագործակցել դրանց դեմ պայքարում,

**Հաստատելով** ընդհանուր շահերի, բարի կամքի, փոխըմբռնման, խաղաղության և ներդաշնակության խթանման վրա հիմնված հարաբերությունների նոր ձևեր և ուղիներ մշակելու իրենց պատրաստակամությունը,

**Համաձայնեցին** հիմնել դիվանագիտական հարաբերություններ սույն Արձանագրության ստորագրման օրվանից՝ Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի 1961թ. կոնվենցիայի համապատասխան, և փոխանակել դիվանագիտական ներկայացուցչություններ:

Սույն արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև երկկողմ հարաբերությունների զարգացման մասին Արձանագրությունը ուժի մեջ են մտնում միևնույն օրը՝ վավերացման գործիքների փոխանակմանը հաջորդող ամսվա առաջին օրը:

Կատարված է ... ........., հայերեն, թուրքերեն և անգլերեն հավասարազոր կրկնօրինակներով: Մեկնաբանության տարաձայնության դեպքում գերակայությունը կտրվի անգլերեն տեքստին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ** — **ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունը.

**Ղեկավարվելով** նույն օրը ստորագրված Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին Արձանագրությամբ,

**Նկատի ունենալով** վստահության և երկկողմ շահերի հարգման վրա հիմնված երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները,

**Որոշելով** զարգացնել և խորացնել իրենց երկկողմ հարաբերությունները քաղաքական, տնտեսական, էներգետիկ, տրանսպորտի, մշակույթի, գիտական, տեխնիկական և այլ ոլորտներում՝ հիմնվելով երկու երկրների ընդհանուր շահերի վրա,

**Աջակցելով** երկու երկրների միջև համագործակցության զարգացմանը միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններում, մասնավորապես ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում, Եվրոպայի Խորհրդում, Եվրասլանտյան գործընկերության խորհրդում և ՍԾՏՀ-ում,

**Հաշվի առնելով** երկու պետությունների ընդհանուր նպատակը՝ համագործակցելու տարածաշրջանային կայունության և անվտանգության ամրապնդման ուղղությամբ՝ հանուն տարածաշրջանի ժողովրդավարական և տնտեսական զարգացման ապահովման,

**Վերահաստատելով** իրենց հանձնառությունը տարածաշրջանային և միջազգային վեճերի և հակամարտությունների խաղաղ կարգավորմանը՝ միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների հիման վրա,

**Վերահաստատելով** իրենց պատրաստակամությունը ակտիվորեն սատարելու միջազգային հանրության գործողություններին՝ ընդդեմ տարածաշրջանում և աշխարհում անվտանգության և կայունության դեմ առկա սպառնալիքների, ինչպիսիք են ահաբեկչությունը, անդրազգային կազմակերպված հանցագործությունը, թմրանյութերի և զենքի ապօրինի առք ու վաճառքը,

**1. Համաձայնեցին** բացել ընդհանուր սահմանը սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում,

**2. Համաձայնեցին նաև**

երկու երկրների արտաքին գործերի նախարարությունների միջև պարբերաբար անցկացնել քաղաքական խորհրդատվություններ,

իրականացնել երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված պատմական հարթության երկխոսություն, այդ թվում՝ պատմական փաստաթղթերի և արխիվների գիտական, անկողմնակալ ուսումնասիրության միջոցով գոյություն ունեցող խնդիրների հստակեցման ու առաջարկների ձևակերպման համար,

առավելագույնս օգտագործել երկու երկրների միջև գոյություն ունեցող ճանապարհային, հաղորդակցության, էներգետիկ ենթակառուցվածքներն ու ցանցերը և միջոցներ ձեռնարկել այդ ուղղությամբ,

զարգացնել երկկողմ իրավապայմանագրային դաշտը՝ երկու երկրների միջև համագործակցությունը խթանելու նպատակով,

համագործակցել գիտության և կրթության ոլորտներում՝ համապատասխան հաստատությունների միջև հարաբերությունների խրախուսման և մասնագետների ու ուսանողների փոխանակումը խթանելու միջոցով, և աշխատանք տանել երկու կողմերի մշակութային ժառանգության պահպանման և համատեղ մշակութային ծրագրեր իրագործելու նպատակով,

համագործակցություն հաստատել հյուպատոսական բնագավառում՝ Հյուպատոսական հարաբերությունների մասին Վիեննայի 1963թ. կոնվենցիայի համաձայն՝ երկու երկրների քաղաքացիներին անհրաժեշտ աջակցություն ապահովելու նպատակով,

ձեռնարկել կոնկրետ միջոցներ երկու երկրների միջև առևտուրը, զբոսաշրջությունը և տնտեսական համագործակցությունը զարգացնելու նպատակով,

երկխոսություն ծավալել և ամրապնդել համագործակցությունը բնապահպանական հարցերում,

**3. Համաձայնեցին** ստեղծել միջկառավարական երկկողմ հանձնաժողով, որը կունենա առանձին ենթահանձնաժողովներ՝ սույն Արձանագրության վերը նշված երկրորդ գործառութային պարբերության հանձնառությունների անմիջական իրագործման նպատակով: Միջկառավարական հանձնաժողովի և նրա ենթահանձնաժողովների աշխատաձևերի մշակման նպատակով, սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 2 ամիս անց, կստեղծվի աշխատանքային խումբ՝ երկու արտգործնախարարների ղեկավարությամբ: Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո 3 ամսվա ընթացքում այդ աշխատաձևերը կհաստատվեն նախարարական մակարդակով: Միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստը կկայանա նշված աշխատաձևերի ընդունումից անմիջապես հետո:

Ենթահանձնաժողովները կսկսեն իրենց աշխատանքը դրանից ոչ ուշ քան մեկ ամիս անց և կգործեն շարունակաբար մինչև իրենց մանդատի ավարտը:

Ըստ անհրաժեշտության, միջազգային փորձագետները կմասնակցեն ենթահանձնաժողովների աշխատանքներին:

Սույն Արձանագրության իրագործման համար երկուստեք համաձայնեցված ժամանակացույցը և տարրերը ներկայացված են հավելվածում, որը հանդիսանում է սույն Արձանագրության անբաժան մաս:

Սույն Արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև Դիվանագիտական Հարաբերություններ հաստատելու մասին Արձանագրությունը ուժի մեջ են մտնում միևնույն օրը՝ վավերացման գործիքների փոխանակմանը հաջորդող ամսվա առաջին օրը:

Ստորագրված է ..............., հայերեն, թուրքերեն և անգլերեն հավասարազոր կրկնօրինակներով: Մեկնաբանության տարաձայնության դեպքում գերակայությունը տրվում է անգլերեն տեքստին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ** — **ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**

***Հավելված*** *: Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման Արձանագրության իրագործման ժամանակացույց և տարրեր*

**Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև երկկողմ հարաբերությունների զարգացման մասին Արձանագրության իրագործման ժամանակացույց և տարրեր**

| Ձեռնարկվող քայլեր | Ժամկետ |
|---|---|
| 1. ընդհանուր սահմանի բացում | Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում |
| 2. երկու արտգործնախարարների ղեկավարությամբ աշխատանքային խմբի ստեղծում՝ միջկառավարական հանձնաժողովի և նրա ենթահանձնաժողովների աշխատաձևերի մշակման նպատակով | Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման Արձանագրության ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից երկու ամիս անց |
| 3. միջկառավարական հանձնաժողովի և իր ենթահանձնաժողովների աշխատաձևերի հաստատում նախարարների մակարդակով | Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման Արձանագրության ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից երեք ամսվա ընթացքում |
| 4. միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստի գումարում | միջկառավարական հանձնաժողովի և նրա ենթահանձնաժողովների աշխատաձևերի ընդունումից անմիջապես հետո՝ նախարարական մակարդակով |
| 5. տորև նշված ենթահանձնաժողովների աշխատանքների մեկնարկում.<br>- քաղաքական հարցերով ենթահանձնաժողով,<br>-ճանապարհային, հաղորդակցության, էներգետիկ և ենթակառուցվածքների հարցերով ենթահանձնաժողով,<br>-իրավական հարցերով ենթահանձնաժողով,<br>-գիտության և կրթության հարցերով ենթահանձնաժողով,<br>-առևտրի, զբոսաշրջության և տնտեսական համագործակցության հարցերով ենթահանձնաժողով,<br>-բնապահպանական հարցերով ենթահանձնաժողով:<br>-պատմական հարթությամբ զբաղվող ենթահանձնաժողով / երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված երկխոսության իրականացում, այդ թվում՝ պատմական փաստաթղթերի և արխիվների անկողմնակալ գիտական ուսումնասիրության միջոցով գոյություն ունեցող խնդիրների հստակեցման ու առաջարկների ձևակերպման համար/՝ հայ, թուրք, ինչպես նաև շվեյցարացի և այլ միջազգային փորձագետների մասնակցությամբ, | միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստից ոչ ուշ քան մեկ ամիս անց |

# Հանդուրժողականությունը զերծ կպահի պատերազմներից

Երեկ Հայաստանում ԱՄՆ-ի դեսպան **Մարի Յովանովիչը** հանդիպեց «Սովորենք հանդուրժողականություն անգլերենի միջոցով» միջազգային ճամբարի մասնակիցների հետ` տեղեկանալու, թե ի՞նչ տպավորություններով են նրանք վերադարձել եւ ի՞նչ տվեցին այդ ձեւաչափով հանդիպումները: Թուրքիայի Չանակկալե քաղաքում կազմակերպված ամառային ճամբարը, որին մասնակցել են 14-17 տարեկան 15 հայ, 19 թուրք եւ 10 ամերիկացի աշակերտներ, իրականացվել է Թուրքիայում ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ: Հայաստանցի աշակերտներին ուղեկցում էին 3 ուսուցիչներ, որոնք էլ երկու շաբաթների ընթացքում ճամբարականներին հայերենի ուսուցողական դասեր են տվել: Նման դասեր են վարել նաեւ թուրք եւ ամերիկացի ուսուցիչները: «Ապագան քոնն է» ԲՍՀԿ-ի կողմից Հայաստանի դպրոցներից ընտրվել են բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները ու մեկնել Թուրքիա: Ճամբարի նպատակն էր օգնել աշակերտներին եւ ուսուցիչներին, նպաստել միջմշակութային շփումներին եւ ավելի լավ հասկանալ միմյանց: Այդ իսկ նպատակով աշակերտների համար կազմակերպվել են տարբեր ինտերակտիվ միջոցառումներ, որոնց ընթացքում կիրառվել է ԱՄՆ-ից բերված բազմամշակութային գրականություն: Ինչպես պատմում էին ճամբարական հայ դպրոցականները` ներկայացրել են հայկական մշակույթը, պարերը, ճաշերը` ներկայացումների եւ շնորհանդեսի միջոցով: «**Ազգը**» զրուցեց տղաների հետ ու հարցրեց` ինչպե՞ս էր շփումը թուրք հասակակիցների հետ, նրանք իրար լրացնելով նշեցին, որ առաջին օրը անգամ չէին բարեւում, իսկ հաջորդ օրվանից կարծես մի բան էր եղել, նրանց վերաբերմունքը կտրուկ փոխվել էր, եւ նրանք լավ ընկերներ էին դարձել, ու ցույց էին տալիս իրենց շապիկների վրա թողած թուրք հասակակիցների ստորագրությունները:



«Մենք նրանց կարողացանք փաստերով ապացուցել, ասում էր Դավիթ Պետրոսյանը, թիվ 78 դպրոցից, որ լավաշը, խորովածը, մածունը, թանապուրը եւ շատ ուրիշ ճաշատեսակներ հայկական են: Նաեւ մեր երգերը, պարային շարժումները: Մի խոսքով, սկզբից դժվար էր, բայց հետո նրանք հասկացան, հանդուրժողականություն ցուցաբերեցին, ու մենք դարձանք լավ ընկերներ»: Երեխաները ոգեւորությամբ տիկ. դեսպանին պատմում էին, թե ինչ կարեւոր դեր կարող է խաղալ հանդուրժողականությունը ժողովուրդների միջեւ բարիդրացիական կապեր հաստատելու համար: «Դուք եք ապագա լիդերները ձեր երկրի, ասաց տիկ. Յովանովիչը, եւ ավելի մեծ հանդուրժողականություն ձեւավորելով հասարակության մեջ` շատ բանի կհասնեք: Այս ճամբարի կարեւորությունն այն էր, որ հայ, ամերիկացի, թուրք երեխաները, միմյանց հետ շփվելով, հնարավորություն ունեցան գիտակցելու, որ իրենց հույսերը, երազանքները, մտահոգությունները, մտավախությունները նույնն են, եւ դա օգնում է, որ առավել հանդուրժող աշխարհ ձեւավորվի: Մենք սատարում ենք հարաբերությունների կարգավորմանն ու սահմանների բացմանը եւ շարունակում ենք հուսալ, որ շուտով շոշափելի արդյունքներ կլինեն: Դա կարեւոր է այստեղ ոչ միայն մեծահասակների, այլեւ երեխաների համար, ինչը նրանց համար նոր հնարավորություններ կբացի ոչ միայն տնտեսական, նաեւ քաղաքական առումով», նշեց դեսպանը լրագրողներին ի պատասխան ու բարեկամություն, հանդուրժողականություն խորհրդանշող տորթը կտրեց:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**



# Հայոց ցեղասպանության վերաբերյալ քննարկումներ Մյունխենի երիտասարդական համաժողովում

**Օգոստոսի 1-15-ը Մյունխենում տեղի ունեցավ Հոլոքոստին նվիրված միջազգային երիտասարդական համաժողով եվրոպական եւ ամերիկյան մի շարք երկրների երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Հայաստանը ներկայացված էր «Երիտասարդության եւ ուսանողների միջազգային կապերի ու փոխանակման հայկական կենտրոն » (ACE) հասարակական կազմակերպության 8 անդամներով, ովքեր հանրապետության տարբեր բուհերի ուսանողներ են: Համաժողովը կազմակերպվել էր Գերմանիայի Դաշնային Հանրապետության երիտասարդության հարցերով զբաղվող նախարարության ջանքերով եւ օժանդակությամբ: Մեր կազմակերպության ներկայացուցիչների առաջարկով քննարկումներում ընդգրկվել է նաեւ Հայոց ցեղասպանության հարցը: Համաժողովի որոշմամբ ստեղծվել են աշխատանքային խմբեր, որտեղ քննարկումներ են ընթացել աշխույժ մթնոլորտում: Հանդիպման մասնակիցները, հատկապես գերմանացի երիտասարդները, աչքի են ընկել Հայոց ցեղասպանության վերաբերյալ տեղեկացվածությամբ:**



**Համաժողովի մասնակիցները միաձայն դատապարտել են Հայոց ցեղասպանությունը` որակելով այն որպես մարդկության դեմ ուղղված խոշոր հանցագործություն:**

**Ի դեպ, մինչ Գերմանիա մեկնելը մեր ուսանողները վերոհիշյալ թեմայով մասնագիտական վերապատրաստում են անցել ՀՀ սփյուռքի նախարարությունում, որը մեծ դեր է խաղացել համաժողովի քննարկումների ժամանակ հարցը պատշաճ մակարդակով եւ ճշգրիտ անգլերենով ներկայացնելու գործում:**

**Հայաստանի ուսանողության մասնակցությունը նման միջոցառումներին կարեւոր նշանակություն ունի հայ եւ օտարերկրյա ուսանողների մերձեցման, միջազգային շարժումներին ինտեգրման գործում, որը եւ «Երիտասարդության եւ ուսանողների միջազգային կապերի ու փոխանակման հայկական կենտրոն» (ACE) հասարակական կազմակերպության հիմնական նպատակներից մեկն է:**

**ԱՐՄԵՆ ՀԱՅՐՈՒՄՅԱՆ**
**ACE երիտասարդական կազմակերպության նախագահ**

# Հրաժեշտ Հնդկաստանին

**Հնդկաստանում դիվանագիտական առաքելությունն ավարտող Հայաստանի դեսպան Աշոտ Քոչարյանը հրաժեշտի հանդիպումներ է ունեցել երկրի բարձրաստիճան պաշտոնյաների, ինչպես նաեւ հայ-հնդկական միջխորհրդարանական հանձնաժողովի նախագահի Նիլիկանտա Ռավիի հետ:**

**Դեսպանն ընդգծել է, որ վերադառնում է Հնդկաստանից ջերմ հուշերով, որ Հայաստանը չափազանց կարեւորում է Հնդկաստանը` որպես մեծ ներուժ ունեցող երկիր: Նա շնորհակալություն է հայտնել հնդկական կողմին` իր պաշտոնավարման ժամանակ ցուցաբերած աջակցության համար: Պարոն Քոչարյանը նշել է, որ վերջին տարիներին երկկողմ հարաբերություններում իրականացվել են բազմաթիվ ծրագրեր տարբեր ոլորտներում: Հնդկաստանն ու Հայաստանը սերտ համագործակցություն են իրականացրել միջազգային ատյաններում: Դելիում անցկացվել են հայկական արվեստի շաբաթներ, բացվել է Հայաստանի փողոց: Նա հույս հայտնեց, որ նման հարաբերությունները շարունակական կլինեն: Դեսպանը բարձր է գնահատել Հնդկաստանի իշխանությունների վերաբերմունքը հայկական համայնքի նկատմամբ: Հնդկական խորհրդարանի նախագահ Մեյրա Կումարը, իր հերթին, բարձր է գնահատել Հայաստանի բարձրագույն կրթության մակարդակը` կարեւորելով հնդիկ ուսանողների ուսումնառությունն այստեղ: Նշվել է նաեւ, որ հնդկական կողմն ուշադրության մեջ է պահում Հայաստանի հետ հարաբերությունները` կարեւորելով երկկողմ տնտեսական համագործակցության խորացումը: Աշոտ Քոչարյանը Հնդկաստանի ղեկավարությանն է փոխանցել ՀՀ ղեկավարության շնորհավորանքները` երկրի անկախության կապակցությամբ:**

**Հ. ԱՓՅԱՆ**

# Երկաթուղային զեղչ` գիտելիքի օրվա կապակցությամբ

Ինչպես տեղեկացանք «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ից, ընկերությունը նոր ուսումնական տարվա կապակցությամբ հայտարարել է 50 տոկոս զեղչ Երեւան-Արմավիր-Երեւան ուղղությամբ երթեւեկող` բուհերի եւ քոլեջների ուսանողների համար: Հաղորդագրության մեջ նշվում է, որ այս ուղղությամբ էլեկտրագնացքը սկսել է երթեւեկել հուլիսի 10-ից:

**Ա. Ս.**

# Անվտանգ երթեւեկության տասնօրյակ` սեպտեմբերի 1-10

ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանությունը, ավանդույթի համաձայն, անցկացնում է անվտանգ երթեւեկության տասնօրյակ, որը կրում է «Ուշադրությո՛ւն, երեխաներ են» խորագիրը: Երեկ լրագրողների հետ հանդիպեց ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ **Մարգար Օհանյանը** եւ ներկայացրեց այն աշխատանքները, որոնք միտված են ապահովելու անվտանգ երթեւեկություն: Նման միջոցառումներ կազմակերպելու նպատակն է հնարավորինս նվազեցնել ճանապարհատրանսպորտային պատահարները (ՃՏՊ):

Պրն Օհանյանը նշեց, որ ՀՀ ոստիկանապետը հանրապետության մարզերի ոստիկանապետերին հեռախոսագիր հանձնարարական է ուղարկել անվտանգ երթեւեկության տասնօրյակը պատշաճ ձեւով անցկացնելու համար: Սեպտեմբերի 1-ին, առավոտյան 7.30-ից մինչեւ երեկո, բոլոր ուսումնական հաստատությունների մոտ, ոստիկանության ստորաբաժանումները կհսկեն ճանապարհային երթեւեկը:

«**Ազգի**» հարցին պատասխանելով, նշեց, որ 2008-ի համեմատ, 40 դեպքով նվազել է ՃՏՊ-ի զոհերի, 132-ով` պատահարների եւ 246-ով` վիրավորների թիվը: 2009-ին ՀՀ-ի տարածքում առ այսօր գրանցվել է 1208 ՃՏՊ, 207 զոհ, 1709 վիրավոր: Դա պայմանավորված է անձնակազմի համալրմամբ, տեխնիկական վերազինմամբ ու համակարգի ուշիմ աշխատանքով, պարզաբանեց ոստիկանության գնդապետը: Լրագրողներին հուզող ամրագոտիների պարտադիր կրման որոշման վերաբերյալ պրն Օհանյանը նշեց, որ բոլորը պարտադիր պետք է կրեն: Դա վերաբերում է նաեւ ուղեւորատար հասարակական տրանսպորտին, որոնց մինչեւ հոկտեմբերի մեկը ժամանակ է տրվել ձեռք բերելու ամրագոտիներ: Օրենքը ընդունվելու օրվանից հանրապետությունում ամրագոտիներ չկապած 8000 վարորդների նկատմամբ արձանագրություն է կազմվել (5000 դրամ տուգանք): Իսկ վերջին 15 օրերին Երեւան քաղաքում 4000 արձանագրություն է կազմվել:

Պրն Օհանյանը նշեց նաեւ, որ շուտով գերբեռնված երթուղայիններին կանդրադառնան, ու այդ վտանգ պարունակող երեւույթին վերջ կտրվի: Մինչեւ տարեվերջ Երեւան քաղաքում կգործեն 25-30 արագաչափեր (ռադարներ), որոնք կարձանագրեն կատարվածը, եւ այդ նկարը կուղարկվի նաեւ վարորդին: Տեսախցիկները խաչմերուկներում կլինեն մոտ ապագայում, դրանք կտեղադրվեն նաեւ հասարակական կարգի պահպանման մարդաշատ վայրերում, այգիներում, Երեւան մուտք գործող մայրուղիներում:

Պրն Օհանյանը նաեւ նշեց, որ ոստիկանության 2 աշխատակից ազատվել են, 12-ը պատժվել` ճանապարհային երթեւեկության անհիմն տարբեր խախտումներ անելու համար: Մի խոսքով, պրն Օհանյանը հավաստիացրեց, որ կամաց-կամաց բոլոր կնճռոտ հարցերը կլուծվեն:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 3.QXD 8/31/2009 9:55 PM Page 1



ԱՐՑԱԽ

# Գյուղական դպրոցներում դասավանդել ցանկացողները քիչ չեն

Ըստ ԼՂՀ կրթության եւ գիտության նախարար **Վլադիկ Խաչատրյանի**, միասնական քննություններով այս տարի պետական եւ պետարտոնագրված բուհերում տեղի է ունեցել որոշ բաժինների թերհամալրում: Մասնավորապես, Արցախի պետհամալսարանի անվճար եւ վճարովի տեղերում կառավարության պլանավորած թվից պակաս է ընդունվել 111 ուսանող:

Միեւնույն ժամանակ, ավագ դպրոցի համակարգին անցնելու հետեւանքով, Ստեփանակերտի 12 միջնակարգ դպրոցներից միայն երկուսը կունենան 10-րդ դասարան: Իսկ ահա ավագ դարձած երկու դպրոցներ այս տարի չեն ունենա առաջին դասարան:

Արդյո՞ք նման իրավիճակով պայմանավորված՝ բուհերում ու հանրակրթարաններում համատարած կրճատումներ կլինեն: Նախարարը հավաստիացրեց, որ կաշխատեն կրճատումներ թույլ չտալ:

Ծավալված զրույցում Վ. Խաչատրյանը կարեւորեց հետեւյալ հանգամանքը. 9-րդ դասարանն ավարտած աշակերտների զգալի մասը դիմել է միջին մասնագիտական եւ արհեստագործական ուսումնական հաստատություններ: Իննամյակի բազայի վրա արդեն կազմակերպվել է ընդունելություն Հայաստանի ագրարային պետական համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի գյուղատնտեսական քոլեջում: Ընդ որում, ընդունվածների թիվը նախորդ տարվա համեմատ ավելի մեծ է: Շուշիի Ա. Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջում եւս նախատեսվածից ավելի շատ ուսանող է ընդունվել: Ստեփանակերտի արհեստագործականում հաշվեգրված սովորողների թիվը թեպետ արդեն հավասարվել է նախորդ տարվա ցուցանիշին, սակայն դիմումների հոսքը շարունակվում է: Նախարարը նաեւ տեղեկացրեց, որ հնարավորինս հարստացրել են Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանի նյութատեխնիկական բազան: Մարտունու արհեստագործական ուսումնարանում, բացի գույքային բարելավումներից, լուծվել է սովորողներին հանրակացարանով ապահովելու խնդիրը: Շրջանի Ճարտար, Խնուշինակ, Գիշի, Սպիտակաշեն գյուղերի բնակիչ արհեստագործականի սովորողներին տեղափոխելու նպատակով ուսումնարանին է տրամադրվել ավտոբուս:

Ինչքանո՞վ են հանրակրթարանները պատրաստ ավագ դպրոցի ներդրմանը: Շեշտելով գործընթացի դժվարությունները, Վ. Խաչատրյանը նշեց, որ առաջին փուլում ընտրվել են ավագ դպրոցի ուսուցիչներ: Այնուհետեւ այդ ուսուցիչները վերապատրաստվել են Երեւանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի մասնագետների միջոցով: Միայն համապատասխան վկայագրեր ստանալուց հետո այդ ուսուցիչները կարող են դասավանդել ավագ դպրոցում:

Այն հարցին, թե ի՞նչ արդյունք է տվել գյուղական բնակավայրեր գործուղված ուսուցիչներին արտոնություններ տրամադրելու մասին կառավարության վերջերս ընդունած որոշումը, ԿԳ նախարարը պատասխանեց, որ այդ ուղղությամբ մեծ տեղաշարժ, իրոք, կա: «Արդեն բավական թվով շրջանավարտ-ուսուցիչների դիմումներ են հաշվառվել, նրանց մի մասին ինքս եմ ընդունել: Տասից ավելի մասնագետների ուղարկել ենք Շահումյանի շրջան: Քաշաթաղի շրջանում զինղեկների խնդիր ունեինք, բայց այդ խնդիրն էլ կլուծվի, որովհետեւ ՆԶՊ եւ ֆիզկուլտուրա ավարտած տղաները պատրաստակամություն են հայտնել այնտեղ աշխատելու: Ցանկացողների հոսքը շարունակվում է, եւ միայն սեպտեմբերի 10-ից հետո կարող ենք հստակ ասել, թե քանի ուսուցիչ ենք գործուղել գյուղական բնակավայրերում աշխատելու», ասաց նա:

Անդրադառնալով դպրոցաշենքերի վիճակին, Վ. Խաչատրյանն իրազեկեց, որ ընթացիկ վերանորոգման աշխատանքները հանրապետության բոլոր դպրոցներում ավարտվել են օգոստոսի 25-ի դրությամբ: Զուգահեռաբար, նոր շենքեր էլ են կառուցվում: Արդեն իսկ սեպտեմբերի 1-ին իր դռները կբացի Ասկերանի նորակառույց դպրոցը: Ընթացքի մեջ են Մարտակերտի շրջանի Վաղուհասի, Հարությունագոմերի, Ստեփանակերտի 6-րդ եւ 11-րդ դպրոցական շենքերի, 1-ին դպրոցի մասնաշենքի կառուցման աշխատանքները: Ավարտման փուլում է Մարտունու շրջանի Սպիտակաշենի դպրոցի շինարարությունը, որից հետո կսկսվի Գիշու դպրոցի շինարարությունը:

Ընթացիկ տարում երեք մանկապարտեզներ՝ Ստեփանակերտում, Մարտակերտ շրջկենտրոնում եւ Առաջաձոր գյուղում, պետական կարգավիճակ են ստացել, որով իսկ պետական հոգածության տակ գտնվող մանկապարտեզների թիվը հանրապետությունում հասել է 24-ի:

Դպրոցների ուսումնանյութական բազան ամրապնդելու գործում միայն պետության աջակցությունը չէ առկա: Նախարարի խոսքով, այս տարի հիմնադրամի միջոցով ստացել են 2500 նստարան, իսկ «Փյունիկ» հիմնադրամը նվիրաբերել է քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության, մասամբ՝ աշխարհագրության 45-ական լաբորատորիա: Սպասվում է, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամը սեպտեմբեր ամսվա ընթացքում կտրամադրի շուրջ 1300 պահարաններ եւ լաբորատոր սեղաններ՝ լաբորատոր սարքավորումների համար:

Ինչ մնում է դասագրքերով ապահովմանը, նախարարի հավաստմամբ, շուրջ 132 մլն դրամ գումարի շրջանակում դասագրքեր են պատվիրվել, որոնք լրիվ ստացվել են: Դրանք արդեն հասցվել են շրջաններ՝ աշակերտներին բաշխելու համար:

**ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**
**Ստեփանակերտ**

# Փոքր դպրոցներում չի կարելի հիվանդանալ

ՀՀ կառավարության որոշմամբ այս ուսումնական տարվանից հանրապետության այն դպրոցներում, որտեղ աշակերտների թիվը ութ հարյուր մեկից քիչ է, չեն աշխատի բուժքույրեր: Այս կրճատումը պայմանավորված է առկա ֆինանսատնտեսական ճգնաժամով:

Փաստորեն երեխաները, որոնք հաճախում են փոքր դպրոցներ, օրվա՝ դպրոցում անցկացրած ժամանակահատվածում որեւէ դժբախտ պատահարի կամ հիվանդության, թունավորման դեպքում զրկվում են շատ կարեւոր առաջին բուժօգնությունից:

Խնդիրն առավել սուր է մարզերի, հատկապես գյուղական համայնքների մեր դպրոցներում, որտեղ շատ քչերում են սովորում ավելի քան ութ հարյուր մեկ երեխա:

**Դիանա Հակոբյանի** երեխան սովորում է հենց այդպիսի դպրոցում: Տիկին Հակոբյանը, լինելով բժշկուհի, մեծ անհանգստությամբ է իր երեխային ուղարկելու դպրոց: «Մեր երեխաները դպրոցներում սնվում են կա՛մ ճաշարաններում, կա՛մ փողոցում վաճառվող ուտելիքներով, իսկ ի՞նչ կլինի, եթե լինեն թունավորման դեպքեր, էլ չեմ խոսում գլխացավերի, սրտխառնոցների մասին: Իսկ, եթե տղաները կռիվ անեն, վնասեն մեկը մյուսին, պետք է սպասեն մինչեւ «շտապօգնությունը» գա՞, իսկ եթե ու՞շ լինի», նշեց նա:

Կառավարության վերոհիշյալ որոշման համաձայն՝ դպրոցների բուժքույրերի պարտականությունն ընկնում է տվյալ համայնքի բժշկի վրա, սակայն համայնքի բժիշկը լավագույն դեպքում շաբաթը, եթե չասենք՝ ամիսը մեկ է լինելու դպրոցում:

Նախորդ տարիներին դպրոցում բուժքույր աշխատած տիկին **Սեդան** նշեց, որ կրճատումից հետո չի կարողանում աշխատանք գտնել. «Գիտեմ, որ ինձ նման շատերը կան երկրում: Նրանցից ոմանք տեղավորվել են հիվանդանոցներում, ոմանք այլ աշխատանք են գտել, սակայն ավելի շատ են նրանք, ովքեր չեն կարողանում աշխատանք գտնել»:

Կրթության եւ գիտության նախարարությունից տեղեկացանք, որ դպրոցների բուժքույրերը համարվում են բուժմիավորման աշխատողներ եւ, չնայած աշխատում են իրենց ոլորտում, աշխատավարձ ստանում են առողջապահության նախարարությունից: Վերջինս էլ, հենվելով կառավարության որոշման վրա, այս տարվանից ավելի քիչ աշխատավարձ կտա:

Ամբողջ աշխարհում, նաեւ մեզանում, կարեւորագույն ոլորտը միշտ էլ համարվել է առողջապահությունը, մանավանդ, եթե խոսքը երեխաների առողջության մասին է: Բայց եթե ամեն ինչ լինի այնպես, ինչպես պետք է լինի, ապա մենք կապրեինք հրաշք երկրում, իսկ դա այդպես չէ... դեռ:

**ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ**

«ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ» ՓԱՍՏՈՒՄ Է

# Ընդդիմադիրների ժամացույցները «տարբեր» ժամեր են ցույց տալիս

«Ժառանգություն» խմբակցության քարտուղար, ԱԺ պատգամավոր **Լարիսա Ալավերդյանը** վստահ է, որ աշնանը քաղաքական զարգացումներում փոփոխություն տեղի չի ունենա, քանի որ հաղթահարված չէ ճգնաժամը: Այն սկսվեց մարտի 1-ին, հետո իշխանական էլիտան իր մեջ ուժ չգտավ ասելու, որ իսկապես քաղաքական ճգնաժամ կա եւ ժամանակի ընթացքում ավելի կխորանա: «Քաղաքական ճգնաժամ կա, որովհետեւ մարտի 1-ի մարդասպանները ազատության մեջ են ու վտանգում են ժողովրդի անվտանգությունը:




Ճգնաժամը ոչ միայն չի վերացել, այլեւ ոչինչ չի արվել հաղթահարելու համար», նկատում է Լարիսա Ալավերդյանը: «Ժառանգության» պատգամավորը վստահ է, որ աշնանը քաղաքական կյանքում պահանջված թեժություն տեղի չի ունենա, որովհետեւ վերադասավորումները եւ քաղաքական կոալիցիայում տատանումները ցույց են տալիս, որ նրանք միասնական չեն: Ալավերդյանը խոստովանում է, որ ընդդիմադիրներն էլ միասնական չեն, ավելին՝ պատրաստ չեն միասնական գործելու:

«Ժառանգություն»-ՀԱԿ-Դաշնակցություն միավորման վերաբերյալ Ալավերդյանի կանխատեսումներն այնքան էլ հուսադրող չեն: ԱԺ պատգամավորը նկատեց, որ վերոնշյալ երեք կուսակցությունները տարբեր ժամային գոտիներում են գտնվում, ժամացույցները տարբեր ժամեր են ցույց տալիս, սակայն որեւէ մեկին չմեղադրեց հետ կամ առաջ ընկնելու համար: Դաշնակցության հետ «Ժառանգությունը» համամիտ է ղարաբաղյան հարցի կարգավորման շուրջը, իսկ ՀԱԿ-ի հետ՝ մարտյան դեպքերի բացահայտման: Բայց այստեղ էլ կան տարբերություններ, օրինակ՝ ՀԱԿ-ը երկիրը ճգնաժամից ազատելու գլխավոր խնդիր տեսնում է իշխանափոխության մեջ, «Ժառանգությունը»՝ համակարգային փոփոխությունների: Ալավերդյանը հավելում է, որ իշխանափոխություն եղել է, սակայն համակարգում նույն մարդիկ են մնացել:

## Սպասում են Ռաֆիկ Պետրոսյանի պարզաբանմանը

Եթե ամռան ամիսներին տեղական քաղաքական դաշտում մի քանի իրադարձություն առանձնացնենք, դրանց մեջ անպայման կլինի ՀՀԿ-«Ժառանգություն» հակամարտությունը: Նախ Գալուստ Սահակյանի եւ Րաֆֆի Հովհաննիսյանի մակարդակով, այնուհետեւ՝ Ռաֆիկ Պետրոսյանի եւ Լարիսա Ալավերդյանի: Մի քանի օր առաջ ՀՀԿ պատգամավորը կրկին անդրադարձել էր խորհրդարանական միակ ընդդիմադիր կուսակցությանը՝ նշելով, որ նրանք «օտարերկրյա պետությունների պատվերն են կատարում»:

«Պահը հասել է, որ իմանանք Հայաստանում բոլորի՞ն են դատում սուտ մեղադրանքի համար, թե՞ միայն Սարգիս Հացպանյանին: Ռաֆիկ Պետրոսյանն այդպիսի հայտարարություն կատարելուց հետո պետք է ներկայացնի ապացույցներ: Նա գիտնական է, փորձառու քաղաքական գործիչ, որին չի սազում նման հայտարարություններ անելը: Թող արձագանքի այս ասուլիսին եւ ներկայացնի իր ապացույցներն ու ասի, թե մենք ո՞ւմ եւ ո՞ր պետության պատվերն ենք կատարում», ասաց Լարիսա Ալավերդյանը: Վերջինս նաեւ մտածում է, թե գուցե այս կերպ իշխանությունները ցանկանում են իրենց ինչ-որ պաշտոն շնորհել:

«Չլինի, որ Արթուր Բաղդասարյանին անվանեցին շպիոն, հետո դարձրին անվտանգության խորհրդի նախագահ, հիմա, ասում եմ, կարող է մի նման ծրագիր էլ «Ժառանգության» հետ է կապված: Նախապես ասեմ, որ «Ժառանգությունը» նման գործարքների չի գնում: Որ կողմից էլ նայում ես, անհեթեթ եւ այդ անձի համար ոչ հարիր հայտարարություն է», նկատեց Ալավերդյանը: Ժառանգությունում քննարկում են հարցը դատարան դիմելու գաղափարը, սակայն առայժմ կսպասեն ապացույցներին, «մանավանդ որ գիտենք, թե դատարան դիմելիս դատավորներն ինչպես են վարվում»:

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Բողոք իրացման գոտու անօթեւան դարձած բնակիչներից

Մարդու իրավունքների պաշտպան **Արմեն Հարությունյանը** դիմել է Երեւանի քաղաքապետ **Գագիկ Բեգլարյանին**՝ ահազանգելով Եկմալյան 1-ին փողոցի ընտանիքների անօթեւան վիճակում հայտնվելու կապակցությամբ: Խմբագրությանը տրամադրված հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ Երեւանի Գլխավոր պողոտայի քաղաքաշինական ծրագրի իրականացման կապակցությամբ վերոնշյալ փողոցի բնակիչները պայմանագրեր են կնքել «Գրադինվեստ» ՍՊԸ-ի հետ՝ վերջինիս կողմից տվյալ տարածքում մինչեւ 2008-ի հունիսը կառուցվելիք նոր շենքում նախկին սեփականատերերին բնակարաններ հատկացնելու մասին: Սակայն մինչ օրս շենքը չի կառուցվել, իսկ բնակիչներին չի տրվել ո՛չ բնակարան, ո՛չ հատուցում: Ավելի քան 60 ընտանիքներ մնացել են անօթեւան: Վերոնշյալին ավելացնենք, որ նման կամ նմանատիպ վիճակում են հայտնվել Երեւանի մի քանի տասնյակ իրացման գոտիների հազարավոր քաղաքացիներ, քանի որ տվյալ գոտիների կառուցապատող ընկերությունները՝ ճգնաժամով պայմանավորված, կամ դեռ չեն սկսել իրացման աշխատանքները, կամ կասեցրել են դրանք: Իսկ կառավարությունն ու Երեւանի քաղաքապետարանը ո՛չ փորձում են պարտադրել ընկերություններին կատարելու իրենց ստանձնած պարտավորությունները այդ տարածքներում, ո՛չ էլ վերացնում են իրացման գոտի հասկացությունն ու դրա սահմանափակումները բնակիչների համար, որպեսզի նրանք կարողանան ազատորեն տնօրինել իրենց գույքը:

**Ա. Ս.**

AZG NEW 4.QXD 8/31/2009 9:07 PM Page 1



## Բարձրագույն ուսում

# Գիտակրթական ինֆորմացիոն մի նախաձեռնության մասին

### *Ինչպես դիմել միջազգային բուհեր*

Ոչ հեռու անցյալում Հայաստանում նույնիսկ համաշխարհային մասշտաբի գիտական սեմինարների, գիտաժողովների ու դասընթացների մասին ինֆորմացիան մենաշնորհային տեսք ուներ: Ինչպես տնտեսության, այնպես էլ գիտության մեջ կային որոշ մարդիկ կամ ինստիտուտներ, որոնք փոստով կամ հեռախոսով ինֆորմացիա էին ստանում, եւ միայն իրենք օգտագործում կամ թաքցնում-պահում էին: Սա չուզվորությունից առավել վտանգավոր միտում էլ էր զարգացնում, որ կոչվում է զանգվածների անտեղյակություն: Իսկ չիմացությունից մինչեւ լճացում կես քայլ էլ չկա: Խնդիր էր նաեւ տեղական գիտական շրջանակների ինֆորմացիայի տարածումը: «Երբ ՀՀ գիտությունների ակադեմիան կամ Սլավոնական համալսարանը միջոցառում էին կազմակերպում, հնարավոր էր, որ այլ բուհերի նմանատիպ մասնագետները եւ հետաքրքրվողները չիմանային, թե ինչ է անցկացվել կամ նախատեսված կողքի բուհում», հիշում են երիտասարդ գիտաշխատողները: Հուրախություն բոլորիս, ինֆորմացիոն սովի եւ նրա հետեւանքների մասին կարող ենք խոսել անցյալ ժամանակով, քանի որ մեծն համաշխարհային սարդոստայնը մի քանի կախարդական «ոստոստումներով» փնտրողի առաջ բացում է անցյալ-ներկա-ապագայի գրեթե ողջ տեղեկատվական գունապնակը:

«Կային մարդիկ էլ, որ չգիտեին ինչ անել այն ինֆորմացիան, որ ստացել էին, բայց իրենց պետք չէր: Իսկ հիմա կարելի է տեղադրել կայքէջում: Սա իր հետ բերում է մասնակցության հայտերի բազմազանություն, մրցակցություն եւ որակի բարձրացում», ներկայիս հնարավորությունները գնահատում է ԵՊՀ քաղաքակրթական եւ մշակութային հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող **Տիգրան Մաթոսյանը**: Նա կոնկրետացնում է իր ասելիքը Ակադեմիական համագործակցության եւ օժանդակության հայկական ասոցիացիայի կայքէջի օրինակով, ուր վաղուց է գրանցվել իր ընկերների հետ եւ բազմաթիվ նորությունների հղումներ է ստանում գիտական աշխարհի անցուդարձից: Կայքէջի մասին առավել մանրամասն զրուցում ենք հիմնադիր **Խաչատուր Գեւորգյանի** հետ: Նա պատմում է, որ հայ ուսանողական ու գիտական շրջանակներում հայտնի Armacad անունը հայերեն «Ակադեմիական համագործակցության եւ օժանդակության հայկական ասոցիացիա» անվան հապավումն է: Ասոցիացիան ստեղծվել է 2007 թվականին, երբ հիմնադիրը տեսավ նմանատիպ գերմանական կառույցը, որը կազմակերպում է նման հավաքներ եւ կրթաթոշակներ տրամադրում օտարերկրյա եւ տեղացի այն անհատներին, ովքեր գիտական համագործակցության փոխանակման ծրագրերի են մասնակցում:

Խաչատուրը www.armacad.org կայքէջը ամենաարդյունավետ ինֆորմացիոն համակարգերից մեկն է համարում, որը ասոցիացիայի գործունեության ընդամենը մի հատվածն է: Ասոցիացիան կազմակերպում է նաեւ տարաբնույթ սեմինարներ, դասախոսություններ եւ հանդիպումներ, օրինակ, «Հայկական քրիստոնեություն եւ իսլամական շիիթ», «Թյուրքական աշխարհ. Իրան եւ Կովկաս, քաղաքակրթական խաչմերուկներ» թեմաներով: Անցկացվել է նաեւ ակադեմիական գրելաոճի մասին դասախոսությունների շարք, որը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում գիտնականները ներկայացնում են այն թեման, որով զբաղվում են, իսկ երկրորդում արտասահմանում սովորող լավագույն համալսարանների ներկայացուցիչները Հայաստանում գտնվելու օրերին ներկայացնում են տվյալ համալսարանը, սովորեցնելով ինչպես դիմել, ասենք, Հարվարդի կամ Քեմբրիջի համալսարան՝ կրթական, մագիստրական կամ ասպիրանտական ծրագրով ընդունելության համար: Armacad-ի նպատակներից մեկն է նաեւ հայաստանյան եւ միջազգային գիտական միջոցառումների մասին տեղեկատվության տարածումը:



Այս նախաձեռնությունն արդեն իսկ արդյունավորվել է նրանով, որ Խաչատուրը կարողացել է ծանոթանալ եւ կապեր հաստատել Հարվարդում, YALE-ում, Օքսֆորդում սովորող հայազգի բոլոր ուսանողների հետ: Դասախոսությունները նպաստում են, որ փաստորեն ամենախելոք մեր ժամանակակիցներն իրենց դրսի փորձը կիսեն ներսում դրանով հետաքրքրվողների հետ, եւ իրենք էլ ճանաչելի դառնան հայ լսարանի համար:

Armacad-ը հայաստանցիների համար մի անսովոր գործառույթ էլ ունի՝ բարեգործությունը: Մարդիկ համացանցում կարող են կարդալ, որ ինչ-որ մեկը կարիք ունի համապատասխան գումարի՝ այս կամ այն կարեւոր գիտաժողովին աշխարհի որեւէ ծայրում մասնակցելու համար, եւ ֆինանսական օգնություն տրամադրել նրան՝ առանց ճանաչելու անգամ: Շատերն օգնում են նաեւ այն ուսանողներին, ովքեր կարճ ժամանակահատվածում չեն հասցնում ծավալուն թարգմանություններ կատարել եւ օգնության հայտարարություն են զետեղել կայքէջում: Այս հարցում հասանելի եւ օգտակար են դառնում հատկապես միջազգային հեղինակավոր բուհերի հայազգի շրջանավարտները:

**Սամսոն Ավետյանը** Հարվարդում սովորում է արդեն մեկ տարի: Armacad-ի միջոցով շփվում է երիտասարդների հետ, բացի այդ, նաեւ փորձում է օգտակար լինել: Այս ամառ գալով իր ծննդավայր, նա հատուկ դասախոսություն կարդաց նրանց համար, ովքեր ուզում են հավուր պատշաճի դիմել եւ ընդունվել Հարվարդի բիզնես դպրոց: Անգլերենով հնչած դասախոսությունը պարզաբանեց Սամսոնի առաջին ուստարվա փորձն ու եզրահանգումները, ինչպես նաեւ ուսման վարձի եւ կեցության հետ կապված աջակցության հնարավորությունը: Ի դեպ, դրանք կազմում են տարեկան 77 000-100 000 դոլար գումար: «Կարեւորը՝ դիմորդը գիտելիքի եւ ուսման հանդեպ սեր ունենա, նախաձեռնող լինի, բարձունքների ձգտող լինի, ասում է Սամսոնը: Անհնարին բան չկա, դրա համար պետք է ունենալ կամքի ուժ եւ ժամանակ տրամադրելու ցանկություն»:

Նրա նշած որակներն անծանոթ չեն **Սոնա Գրիգորյանին**, որը մասնագիտությամբ արեւելագետ է: «Սեպտեմբերից սովորելու եմ Կենտրոնական եվրոպական համալսարանի միջնադարագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում: Երկու տարի ժամկետով ուսանելու հնարավորության մասին իմացել եմ Armacad-ի միջոցով, որի անդամներից եմ հենց սկզբնավորման պահից: Ընդ որում, իմանալը գործի միայն սկիզբն է, պետք է համոզիչ լինես դիմելիս: Ես ընդունվելու համար փուլային հետազոտության շրջան եմ անցել: Առաջինում պետք է պատասխանեի, թե ինչ եմ ուզում այնտեղ ուսումնասիրել, երկրորդ փուլը TOEFL-ի քննությունն էր, երրորդը՝ հեռախոսային հարցազրույցը, որից որոշ ժամանակ անց պարզ դարձավ՝ ընդունվել եմ, թե ոչ: Ես ընդունվել եմ ամբողջական կրթաթոշակի ապահովմամբ», պատմում է Սոնան: Նա համեստորեն նշում է, որ այս տարի բավականին բարձր մրցակցություն է եղել կոնկրետ միջնադարագիտության բաժնում: 3800 հոգուց միայն Սոնան է հայաստանցի, նույն բուհի քաղաքագիտության բաժին, ըստ Սոնայի, եւս երեքն են ընդունվել, բնապահպանական բաժնում էլ կան հայաստանցիներ: «Armacad-ը ոչ միայն տեղեկացնում է հայտ ներկայացնելու հնարավորության մասին, այլեւ ընդունելության արդյունավետ մեթոդներ է սովորեցնում: Անգամ, երբ ցանկացա իմանալ, թե էլ ովքեր են ընդունվել CEU, էլի Armacad-ի միջոցով իմացա: Սա շատ օգտակար ցանց է, երբ պետք է իրար գտնել-օգնել-տեղեկացնելու համար», ասում է Սոնան:

**Ծովինար Տերտերյանն** ավարտել է Ջորջթաունի համալսարանը: Նա համարվում է Armacad-ի աշխատակազմի անդամ, անգլերեն տեքստերի խմբագիրն է: Օրիորդը Armacad-ի գործունեության մեջ շեշտը դնում է միջազգային գիտաժողովների մասին տեղեկատվության տարածման արդյունավետության վրա, այն իմաստով, որ դրանց մասին իմանալով՝ կարող ենք հայկական հարցեր շոշափող շատ թուրք եւ ադրբեջանցի դասախոսների լսել, ապա եւ դահլիճից փաստերով լի հարցերի միջոցով անգամ հակադրվել՝ փոփոխել հարցին ոչ այնքան մանրամասնորեն տեղեկացված լսարանի միակողմանի ստացած ինֆորմացիայի տպավորությունը: Ըստ Ծովինարի, հայկական սփյուռքի լոբբինգը շատ ուժեղ է ԱՄՆ-ում, ի տարբերություն Հայաստանի լոբբինգի, որն, իրոք, շատ թույլ է: «Ինչքան ավելի շատ հայաստանցի ուսանող ունենանք, այնքան մեր պետության եւ ազգային քաղաքականության միտումներն ավելի հասկանալի կլինեն դրսում, համոզված է Ծովինարը: Հիմա ասեմ, թե ինչ օգուտ եմ ստացել Armacad-ից: Երեք սեմինարների եմ մասնակցել Armacade-ի շնորհիվ: Բացի այդ, կարող ես տեղեկություն տարածել, որ դու գտնվում ես կամ լինելու ես աշխարհի որեւէ քաղաքում եւ կեցության խնդիրներ ունես: Քո հայրենակիցները կամ ազգակիցները, կամ անծանոթ բարի մարդիկ կարող են նույն ցանցի միջոցով արձագանքել՝ տրամադրելով բնակության վայր: Այսինքն՝ սա մի ձեւ է, որի շնորհիվ կարող ես ֆինանսական խնդիրներ պարզապես չունենալ»:

**Մարիամ Ավետիսյանի** եւ **Բադալյան Մերիի** հետ ծանոթացանք Սամսոն Ավետյանի դասախոսությունից հետո: Մարիամը պատմեց, որ ցանկանում է մագիստրատուրան ավարտել Հարվարդում: «Այս հանդիպումը շատ բան տվեց, ասում է Մարիամը: Եթե համեմատելու լինեմ Հարվարդի կայքէջում տրված ինֆորմացիայի հետ, սա ավելի մեծ բան է տալիս, քանի որ կողմնորոշում է եւ մեկ ժամից ավելի ինտերնետը փորփրելուց է ազատում: Մերին էլ նշում է, որ հոկտեմբերին Հարվարդի բիզնես դպրոց ընդունվելուն է նախապատրաստվում: «Սամսոնի դասախոսությունը որոշ գիտելիքներ ավելացրեց այն ինֆորմացիային, որ կարդացել էի Հարվարդի համալսարանի կայքէջում, մասնավորապես կեցության եւ ընդունելության անֆորմալ ձեւերի մասին»: Մերիենց ընտանեկան բիզնեսը եւ նրա 15 տարիների փորձն այդ գործում ցույց են տալիս, որ ավելի բարձր հաջողությունների հասնելու համար հարկավոր է համապատասխան գիտելիքների բազա, ինչպես նաեւ դիպլոմ, որ կտա MBA-ը: Իսկ այս հանդիպումը հստակ քայլ առաջ է դեպի նպատակակետ:

2500-ից ավելի մարդ կա Armacad ցանցում, որը հասարակական գիտություններին վերաբերող ցանց է: Հիմնադիր **Խաչատուր Գեւորգյանը** տեղեկացնում է, որ կա նաեւ Armacad.exe ցանց, որը ճշգրիտ գիտությունների ոլորտի մասնագետների համար է, ինչպես նաեւ Armenian studies ցանցը, որը հայագիտական ոլորտի մասնագետների համար է:

Ցանցի արդյունավետության մասին խոսելիս զրուցակիցներս առանձնացնում են, որ այս կամ այն բուհի կամ սեմինարի մասնակցելու համար դիմելով մերժվելն անգամ օգտակար է այն առումով, որ դու սկսում ես հասկանալ, թե հաջողվելու համար ինչպե՞ս դիմես, ինչպիսի ձեւակերպումներ անես:

Աշխարհում Armacad-ի նման եւ առավել հզոր մի քանի ցանցեր կան՝ թուրքականը, բալկանյանը... Հայաստանյան նմանատիպ ցանցի առաջխաղացումը նպատակ ունի ՀՀ-ում լուրջ գիտական ինֆորմացիոն համակարգ ունենալու, որ վստահաբար ասելիք կունենա նաեւ միջազգային ասպարեզում:

*ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ*

---

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

# Հանրակրթությունը սկսվում է մանկապարտեզից

### *Շիրակի մարզի մանկավարժների օգնության խորհրդակցությունից*

**Հանրակրթության նոր օրենքը հստակ ամրագրում է մասնավորապես այն դրույթը, որ կրթության ընդհանուր մատչելիության, շարունակականության ապահովման համար անհրաժեշտ է, որ հանրակրթության յուրաքանչյուր բաղադրիչ, օղակ հավասարապես կարեւորվի: Շիրակի մարզի մանկավարժների օգնության ավանդական խորհրդակցությունում իր զեկուցման մեջ նշելով այս մասին, մարզային կրթության վարչության պետ Սահակ Մինասյանը հատուկ կանգ առավ նախակրթարանների խնդրի վրա՝ դրանք դիտարկելով որպես հանրակրթության կարեւոր բաղադրիչ մաս, հիմնային օղակ եւ առաջին փուլ՝ ի տարբերություն խորհրդային շրջանի ավելի համեստ խնդիրներ ունեցող նախակրթարան-մանկապարտեզների:**

**Թերեւս այս նոր գործառույթի ըմբռնումով էր պայմանավորված անցյալ տարի կրթության որակի եւ համապատասխանության վարկային ծրագրի շրջանակներում, ԿԳ նախարարության կրթական ծրագրերի կենտրոնի աջակցությամբ մարզում զարգացման մի նոր մոդելի կիրառումը, այն է՝ Ախուրյանի նախկին վարչատարածքի 12 համայնքներում նախակրթարանների վերաբացումը՝ կենտրոնի 60 տոկոս եւ տվյալ համայնքի 40 տոկոս ֆինանսավորմամբ: Ընդ որում, համայնքն այդ 40 տոկոսը կարող էր ներկայացնել նաեւ աշխատուժի, շինանյութերի եւ այլ տեսքով... Պրն Մինասյանի գնահատմամբ՝ խնդիրը լուծվեց, որովհետեւ «մենք կարողացանք տեսնել եւ ամրագրել այն միասնական հայեցակարգը, այն նպատակը, որին այսօր ծառայելու են մեր նախակրթարանները»:**

**Կրթության վարչության պետը, խոսելով միջնակարգ կրթության համակարգի ներկա խնդիրների մասին եւ այստեղ էլ կարեւորելով նպատակների ու գործառույթների նորովի ընկալման կարողությունը, անդրադարձավ ամեն մի դպրոցի, մանկավարժի, աշակերտների ներքին ու արտաքին գնահատման հարցերին: Մասնավորապես նշվեցին իրականացվող փոփոխությունների ընթացքում դպրոցի տնօրենների կողմից այս կամ այն ուսուցչին, իր համար «անցանկալի» անձին կամայականորեն աշխատանքից ազատելու եւ ուրիշով փոխարինելու, թեկուզ թերությունների համար «հաշվեհարդարի» անթույլատրելիությունը, թերություններն ուղղելու եւ դեպի զարգացում տանելու երաշխավորված, ծրագրային մոտեցումներ ունենալու անհրաժեշտությունը, դպրոցում տղամարդ ուսուցիչների պակասը եւ դա հետզհետե մեղմելուն նպաստող քայլերը, որոնցից մեկը կարող է լինել նոր օրենքով լեռնային, բարձրլեռնային եւ սահմանամերձ գյուղերում աշխատողների աշխատավարձերի նախատեսվող մինչեւ 50 տոկոս հավելումը: Միաժամանակ ասվեց նաեւ, թե դրույք-ուսուցիչ հարաբերակցության շարունակվող նվազմամբ պայմանավորված՝ մանկավարժների «տեղին կրճատումներ» արվել են, սեպտեմբերին նոր դասաբաշխումներից հետո, ըստ ամենայնի, էլի կլինեն:**

**Շիրակցի մանկավարժների օգնության խորհրդակցությանը մասնակցում էր եւ ելույթ ունեցավ ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը: Պրն Աշոտյանը բարի լուրով սկսեց խոսքը՝ տեղեկացնելով, որ նկատի ունենալով Շիրակի մարզում իրականացված փորձնական ծրագրի հաջողությունը, նախարարությունը կառավարությանն է ներկայացրել մի որոշման նախագիծ, ըստ որի բոլոր այն համայնքներում (հանրապետությունում 19 համայնք), որտեղ նախադպրոցական կրթությունը կազմակերպվել է նոր ծրագրով, հանրակրթական դպրոցների հենքի վրա, հաջորդ տարվանից այդ դասարանների ծախսերը ներառված են լինելու 2010 թ. պետական բյուջեում որպես աշակերտ-թվով ֆինանսավորում: Համաշխարհային բանկի հետ կնքած նոր համաձայնագրի շրջանակում նախատեսվում է այդ ծրագիրը ներկայացնել հանրապետության արդեն 140 համայնքներում: Նախարարն իր ելույթում մի շարք կողմերով ներկայացրեց հանրակրթության բարեփոխումների արդի փուլի առանձնահատկությունները:**

*ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ*

AZG NEW 5.QXD 8/31/2009 9:08 PM Page 1



# Ի՞նչ նպատակ է հետապնդում վարչապետ Էրդողանի «քրդական» նախաձեռնությունը

## *Ինչպե՞ս է դա գնահատում PKK-ի առաջնորդ Աբդուլլահ Օջալանը*

Մինչ Թուրքիայում հասարակական-քաղաքական շրջանակները ակտիվորեն քննարկում էին վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի «քրդական» նախաձեռնությունը, օգոստոսի 30-ին, «Հաղթանակի» տոնին, Իրաքին եւ Իրանին սահմանակից Շեմդինլի գավառում բախման մեջ մտնելով թուրքական անվտանգության ուժերի հետ, PKK-ն սպանում է չորս թուրք զինծառայողի: Սպանությունը նախ մթագնում է «Հաղթանակի» օրվա տոնական հանդիսությունները, ապա եւ, Էրդողանի վկայությամբ, կացնահարում քրդական հարցի լուծման առաջադրանքով ցուցաբերված համանուն նախաձեռնությունը: Մինչդեռ այդ նախաձեռնության առնչությամբ PKK-ն հունիսի 1-ից զինադադար էր հայտարարել:

Թեեւ թուրքական իշխանությունները, ելնելով զինադադարի խախտումից, նախաձեռնության կացնահարման պատասխանատվությունը բարդում են PKK-ի վրա, սակայն խնդիրը սոսկ այս կազմակերպությունը չէ, այլ վերջինի դեմ թուրքական անվտանգության ուժերի ձեռնարկած ռազմական գործողությունների դադարեցումը, ինչը չէր արվել: Ավելին, թուրքական ռազմաօդային ուժերի զորահրամանատարը նախօրեին հայտարարել էր, որ այդ գործողություններն անենայն վճռականությամբ կշարունակվեն, քանի դեռ վերջնականապես չի ոչնչացվել PKK-ն:

PKK-ի ֆիզիկական ոչնչացումը չի կարող քրդական հարցի լուծման միջոց դառնալ Թուրքիայում: Ինչ վերաբերում է «քրդական» նախաձեռնությանը, որքան էլ դա միջազգային լայն հնչեղություն ստանա, առ այսօր դրա առնչությամբ գործողությունների որեւէ ծրագիր, այսինքն «ճանապարհային քարտեզ», թուրքական կառավարությունը չի հրապարակել: Ընդամենը երեկ ներքին գործերի նախարար Բեշիր Աթալայը նախաձեռնության հետ կապված պարզաբանումներ է տվել լրագրողներին, թե քրդական հարցը պետք է լուծվի Թուրքիայի ազգային մեծ ժողովում, Թուրքիայի օրակարգում չկա սահմանադրության փոփոխությունների որեւէ խնդիր, համաներման մասին կառավարությունը նույնիսկ չի հիշատակել եւ թուրքերենը՝ որպես պաշտոնական լեզու, երկրում կրթության լեզուն է նաեւ:

Եթե համադրենք Թուրքիայի ներքին գործերի նախարարի ասածները, ապա դժվար չէ կռահել, որ վարչապետ Էրդողանի «քրդական» նախաձեռնության առաջադրանքը ոչ թե համանուն հարցի լուծումն է, այլ PKK-ի զինաթափումն ու զինաթափման միջոցով այս կազմակերպության չեզոքացումը: Մինչդեռ Թուրքիայում բնակչության 1/4-ը կազմող քրդերն ակնկալում էին նախաձեռնության շնորհիվ երկրում ստանալ մշակութային ինքնավարություն, մայրենի լեզվով կրթության իրավունք եւ քաղաքական իրավունքների ընդլայնում: Ընդլայնման հանգամանքը չափազանց կարեւոր է ոչ միայն քրդերի, այլեւ հենց Թուրքիայի առումով, քանի որ PKK-ն զինաթափելու համար անհրաժեշտ է քրդական այս կազմակերպության պայքարը զինված գործողությունների հարթությունից տեղափոխել քաղաքական պայքարի հարթություն:

Հասկանալի է, որ օգոստոսի 29-ին հանդիպելով Իմրալի կղզում փաստաբանների հետ, նրանց էլ Թուրքիայում քրդական հարցի կարգավորման «ճանապարհային քարտեզի» մասին պարզաբանումներ է տվել PKK-ի առաջնորդ Աբդուլլահ Օջալանը: «Բիրգյուն» գործակալության վկայությամբ, նա ասել է. «Իմ ներկայացրած «ճանապարհային քարտեզով» թուրքերի եւ քրդերի համար ընդհանուր հայրենիք են դառնալու ինչպես Թուրքիան, այնպես էլ Քուրդիստանը: Քուրդիստան արտահայտությունը ես չեմ հորինել, պատմական հասկացություն է, եւ դա հրովարտակներում գործածել են օսմանյան սուլթանները: Հակառակ Ազգայնական շարժում կուսակցության պնդումներին, այս «ճանապարհային քարտեզը» ոչ թե մասնատող է, այլ միավորող, ժողովրդավարական: Դա լուրջ ծառայություն է Թուրքիային, Թուրքիայի ժողովուրդներին եւ թուրքական ժողովրդավարությանը: Ես պատրաստել եմ 160 էջ, դա ունի 600 էջանոց հիմնավորում»:

Այնուհետեւ Օջալանը «քրդական» նախաձեռնությանը հակադրվելու համար քննադատել է Ազգայնական շարժում կուսակցության առաջնորդին, ասելով. «Երբ Դեւլեթ Բահչելին զրկվեց ԱՄՆ-ի աջակցությունից, սկսեց հակադրվել: Մինչդեռ նրանց ամերիկացիներն էին մարզում, ինչպես մարզել են «Ալ Ղաիդային»: Այսինքն՝ նրանք ԱՄՆ-ի ծնունդ են: 2007-ի նոյեմբերի 5-ին ԱՄՆ-ը դադարեցրեց աջակցությունը: Թեեւ երկրում պետական լեզուն թուրքերենն է, սակայն այստեղ բնակվում են 20 միլիոն քրդեր, ունեն մայրենի լեզու, նրանք հո անասո՞ւն չեն, եթե չօգտագործեն, ապա ինչպե՞ս են զարգացնելու քրդերենը: Քրդական հարցի լուծման համար անհրաժեշտ է ժողովրդավարական նոր սահմանադրություն: Առանց դրա հարցը երբեք չի լուծվի»:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

2-ՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏ

# Պուտինը դատապարտեց Մոլոտով-Ռիբենտրոպ պակտը

Ռուսաստանի վարչապետ Վլադիմիր Պուտինը 2-րդ աշխարհամարտի սանձազերծման 70-ամյակի նախօրեին լեհական «Գազետա Վիբորչա» թերթում հրապարակած հոդվածում Մոլոտով-Ռիբենտրոպ պակտը համարում է պատերազմի միակ ձգան: Նրա կարծիքով, նույնպիսի դեր կատարել էր 1938 թ. Մյունխենի համաձայնագիրը, որից հետո Հիտլերը որոշել էր, որ «ամեն ինչ թույլատրելի է», եւ որ Ֆրանսիան եւ Անգլիան «մատը մատին չեն խփի իրենց դաշնակիցներին պաշտպանելու համար»:

Պուտինը հիտլերյան նախահարձակմանը նպաստած խթաններ է համարում նաեւ 1-ին աշխարհամարտից հետո Վերսալի հաշտության պայմանագրով «Գերմանիայի նվաստացումը», Գերմանիային Ավստրիայի միացումը: ՌԴ վարչապետը հիշեցնում է, որ Մյունխենի համաձայնագրի ստորագրումից հետո Լեհաստանն ինքն էլ է մասնակցել Եվրոպայի վերաբաժանմանը՝ բռնակցելով չեխական Տեշինյան Սիլեզիան: Հոդվածագրի կարծիքով, մյունխենյան դավադրությունը ի չիք դարձրեց «ֆաշիզմի դեմ պայքարի միասնական ճակատ ստեղծելու բոլոր հույսերը»:

ՌԴ վարչապետը դատապարտել է ինչպես Մոլոտով-Ռիբենտրոպ պակտը, այնպես էլ ֆաշիզմի հետ կնքված մյուս գործարքները: Բայց 1939-ին ԽՍՀՄ-ը հայտնվել էր երկու ճակատով պատերազմելու (ակտիվացել էին մարտերը ճապոնացիների դեմ Խալխին-Գոլ գետի մոտ) վտանգի առջեւ, «Արեւմուտքում ԽՍՀՄ-ի հնարավոր դաշնակիցները արդեն համանման համաձայնություններ էին եկել գերմանական ռայխի հետ եւ չէին ուզում համագործակցել»: Նման պայմաններում ԽՍՀՄ-ը որոշեց, որ չհարձակվելու պակտից հրաժարվելն անխոհեմություն կլիներ:

# Իրանը արգելում է ռուսական ինքնաթիռների վարձակալումը

Այս տարվա հուլիսին (15-ին եւ 24-ին) տեղի ունեցած երկու ճակատագրական ավիավթարների պատճառով Իրանի իշխանությունները արգելել են երկրի օդային ծառայություններ մատուցող ընկերություններին վարձակալել կամ գնել ռուսական օգտագործված ինքնաթիռներ, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի օգոստոսի 22-ի համարը՝ հենվելով «Ռոյթեր» գործակալության լրատվության վրա:

Այդ մասին հայտարարել է Իրանի քաղաքացիական ավիացիայի գլխավոր պետը՝ Մոհամմեդ Ալի Իլխանին՝ ավելացնելով, որ նախընտրությունը տրվելու է արեւմտյան արտադրության ինքնաթիռներին, իսկ ռուսական կամ արեւելյան արտադրության ինքնաթիռները օգտագործվելու են «եթե ամբողջովին նոր են եւ համապատասխանում են մեր մասնանշած պահանջներին»:

«Ռոյթեր» գործակալությունը հիշեցնում է սակայն, որ Իրանի հանդեպ կիրառված Մ. Նահանգների տնտեսական սահմանափակումները թույլ չեն տալիս, որ «Բոինգ» ինքնաթիռներ վաճառվեն Իրանին, կամ Իրանը նման ինքնաթիռներ եւ պահեստամասեր գնի ընդհանրապես որեւէ արեւմտյան երկրից: Իրանը պարտավոր է առավել շրջահայաց քաղաքականություն վարել:

Հ. Ծ.

# Դալայ-լաման ժամանեց Տայվան

## *Պեկինը խիստ դժգոհ է*

Տիբեթցի բուդդայականների հոգեւոր առաջնորդ Դալայ-լամա 14-րդը երեկ Տայվան է ժամանել «Մորակոտ» թայֆունից տուժածներին աջակցելու նպատակով: Ֆրանսպրես գործակալությունը նշում է, որ վերջին կես դարում կղզու վրայով անցած այդ սաստկագույն թայֆունը օգոստոսի 7-ին 670 զոհ է պատճառել:

Չինաստանը կղզու վերջնական բաժանում: ՉԺՀ-ն շարունակում է Տայվանը համարել իր տարածքի մի մասը, ուստի անչափ դժգոհ է Դալայ-լամայի այցելությունից: Պեկինում հայտարարել են, որ «անջատականի» այցը լուրջ հարված կհասցնի մայրցամաքային Չինաստանի եւ Տայվանի հարաբերություններին:



Տայբեյի միջազգային օդանավակայանում Դալայ-լաման հայտարարել է, որ իր այցելությունը չունի քաղաքական ենթատեքստ: «Ես վանական եմ: Ինձ խնդրել են աղոթել հանուն խաղաղության: Դա ոչ թե քաղաքականություն է, այլ մարդասիրություն», ասել է նա լրագրողներին:

Դալայ-լաման Տայվանում է կղզու ընդդիմադիր Ժողովրդավարական առաջադիմական կուսակցության հրավերով, որը պահանջում է մայրցամաքային Չինաստանից կղզու վերջնական բաժանում. 

Տայվանում կառավարող «Գոմինդան» ազգայնական կուսակցության ներկայացուցիչները ընդգծել են, որ Դալայ-լամայի այցը քաղաքական չէ եւ կոչված է աջակցելու «Մորակոտ» թայֆունից տուժածներին: «Գոմինդանը» հանդես է գալիս մայրցամաքային Չինաստանի հետ մերձեցման օգտին:

Դալայ-լաման Տիբեթից հեռացել է 1959 թ. հակաչինական ապստամբության ճնշումից հետո եւ Հնդկաստանում գլխավորում է Տիբեթի տարագիր կառավարությունը:

# Ճապոնիայում հաղթեց Դեմոկրատական կուսակցությունը

Ճապոնիայի վարչապետ Տարո Ասոն երեկ ընդունել է օգոստոսի 30-ի խորհրդարանական ընտրություններում Լիբերալ-դեմոկրատական կուսակցության պարտության փաստը եւ հրաժարվել է կուսակցապետի պաշտոնից: Դեմոկրատական կուսակցությունը 62-ամյա Յուկիո Հատոյամայի գլխավորությամբ ստացել է խորհրդարանում շատ կարեւոր համարվող ստորին պալատի 480 տեղերից 308-ը:

Երկրի կուսակցություններից որեւէ մեկը երբեւէ 300-ից ավելի տեղ չէր ստացել խորհրդարանի ստորին պալատում, արձանագրում է CNN հեռուստաընկերությունը: 1955 թվականից Ճապոնիայում գրեթե անընդմեջ կառավարող Լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը ջախջախիչ պարտություն է կրել՝ ստանալով 119 տեղ:

Լիբերալ-դեմոկրատների դաշնակից Կոմեյտո կուսակցությունը ստացել է 21 տեղ՝ առաջվանից 10-ով պակաս:

Դեմոկրատական կուսակցությունը կարող է կառավարություն կազմել նույնիսկ առանց դաշնակիցների, սակայն մտադիր է միանալ Սոցիալ-դեմոկրատական եւ Նոր ժողովրդական կուսակցություններին հետ, որոնք ստորին պալատում ունեն համապատասխանաբար 9 եւ 3 տեղ: Համագործակցությունն անհրաժեշտ է դեմոկրատների դիրքերն էլ ավելի կայուն դարձնելու համար:

38-ամյա Տարո Ասոն վարչապետի պարտականությունները կկատարի մինչեւ սեպտեմբերի կեսերը, երբ խորհրդարանի արտակարգ նստաշրջանը կընտրի նոր վարչապետ: Հավանական թեկնածուն դեմոկրատների առաջնորդ Յուկիո Հատոյաման է:

# Կոլումբիայի նախագահը «խոզի» գրիպ է ընկել



Կոլումբիայի նախագահ Ալվարո Ուրիբեն վարակվել է այսպես կոչված «խոզի» գրիպով: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը, վկայակոչելով Կոլումբիայի սոցիալական պաշտպանության նախարար Դիեգո Պալասիոյին:

Վերջինիս խոսքերով, Ուրիբեի ինքնազգացողությունը վատացել էր օգոստոսի 28-ին՝ Արգենտինայում Հարավամերիկյան ազգերի միության արտակարգ գագաթաժողովի օրը:

Ուրիբեի հիվանդության ախտորոշումից անմիջապես հետո Կոլումբիայի իշխանությունները գագաթաժողովի՝ նրա հետ շփված մասնակիցներին նախազգուշացրել էին վարակման վտանգի մասին: Նախարարի խոսքերով, անձամբ Ուրիբեի առողջական վիճակի առնչությամբ բժիշկները երկյուղներ չունեին:

Արգենտինայի գագաթաժողովը հրավիրվել էր այն կապակցությամբ, որ Կոլումբիայի իշխանությունները համաձայնել էին երկրի տարածքում յոթ ռազմակայաններ օգտագործման հանձնել ամերիկացի զինծառայողներին: Հարավամերիկյան ազգերի միության անդամ պետությունների ղեկավարները կարծում են, որ այդ համաձայնագիրը տարածաշրջանում կտրուկ կփոխի ուժերի հարաբերակցությունը:

Ալվարո Ուրիբեն լատինամերիկյան պետություններում «խոզի» գրիպով վարակված երկրորդ ղեկավարն է: Օգոստոսի կեսերին այդ վտանգավոր հիվանդությունը հայտնաբերվել էր Կոստա Ռիկայի նախագահի՝ խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր Օսկար Արիասի օրգանիզմում: Բժիշկների խոսքերով, ներկայումս նա ապաքինվում է:

AZG NEW 6.QXD 8/31/2009 9:05 PM Page 1



# Վերականգնվեց Մինասի «Թորոս Ռոսլինի ծնունդը» որմնանկարը



Մեկամյա վերականգնողական աշխատանքներից հետո արվեստասեր հասարակությունը կարող է հմայվել Մինասի «Թորոս Ռոսլինի ծնունդը» որմնանկարով, որն, ինչպես խոստովանում են մասնագետները, բնօրինակից ոչնչով չի տարբերվում: Որմնանկարի բացման արարողությունը տեղի կունենա սեպտեմբերին: Մինչ այդ «Նովոստի» մամուլի կենտրոնում Ջաջուռի Մինաս Ավետիսյանի տուն-թանգարանի տնօրեն **Արման Ավետիսյանն** ու իտալացի մասնագետներն անդրադարձան Մինասի որմնանկարների առանձնահատկություններին ու խնդիրներին:

«Թորոս Ռոսլինի ծնունդը» ութ որմնանկարներից մեկն է, որ երկրաշարժից հետո գտնվում էր սարսափելի վիճակում: Որմնանկարը ստեղծվել էր 1973-ին՝ էլեկտրատեխնիկայի ճաշարանի մասնաճյուղի պատին: Արման Ավետիսյանը պատմում է, որ այդ ստեղծագործություններին որեւէ ուշադրություն չի հասկացվել, ավելի քան քսան տարի գտնվել են փլատակների կողքին: Խոնավ ու ցուրտ պայմանների պատճառով շատերը վնասվել են: «Թորոս Ռոսլինի ծնունդը» որմնանկարն ունեցել է 20 տոկոսի կորուստ, ինչը հնարավոր չէր վերականգնել: Որմնանկարը վերականգնողները՝ իտալացի մասնագետներ Ֆաբրիցիո Յակոպինին եւ Լորենցո Կասամենտին, Հայաստան են այցելել 3 անգամ: «Մինասը կիրառել է միամիտ գույներ, սակայն դրանց համադրությամբ հասել է այնպիսի տպավորության, որը միայն մեծ նկարիչներին է բնորոշ: Երբ պատից պոկեցինք որմնանկարը եւ սկսեցինք աշխատել վերականգնելու ուղղությամբ, հասկացանք, որ տարբերվում է մեր նախորդ վերականգնած գործերից հենց գույների ընտրությամբ», նկատում է Յակոպինին.

«Թորոս Ռոսլինի ծնունդը» որմնանկարի վերականգնման ընթացքի վերաբերյալ վավերագրական ֆիլմ է նկարահանվել: Այժմ ընթանում են վերջին աշխատանքները, շուտով ֆիլմը կհանձվի հանդիսատեսի դատին: Ֆիլմի պրեմիերան տեղի կունենա հոկտեմբերին Գյումրիում, այնուհետեւ կցուցադրվի Մոսկվայում նախատեսված Մինասի ցուցահանդեսի շրջանակներում:

Գարնանը նախատեսվում է սկսել Մինասի «Արմենիա» որմնանկարի վերականգնման աշխատանքները. այժմ նախարարությունում քննարկում են, թե բավական մեծ չափեր ունեցող որմնանկարը որտեղ պետք է տեղադրեն պատից պոկելուց հետո: Մշակույթի նախարարի խորհրդական **Սոնա Հարությունյանին** մտահոգում է նաեւ խնդրի ֆինանսական կողմը: Ընդհանուր առմամբ 10 մլն դրամ է ծախսվել «Թորոս Ռոսլինի ծնունդը» որմնանկարի վերականգնման համար: Հատուկ նյութերը պատվիրել են Իտալիայից: Մինասի մնացած որմնանկարները վերականգնելու նպատակով նախարարությունում որոշել են դիմել մի շարք բարերարների՝ աջակցության ակնկալիքով:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Արմեն Զարյան ճարտարապետը, հետազոտողը, մտավորականը

Անցած շաբաթը զարյանական կարելի է համարել: Բացվեց հայր եւ որդի Կոստան եւ Արմեն Զարյանների հուշատախտակը՝ Աբովյան 17 հասցեում: Մի փոքր վաղ լույս էր տեսել գրողի «Բառերի ոսկին» բանաստեղծական ստվար ժողովածուն՝ պետպատվերի շրջանակներում («Սարգիս Խաչենց» եւ «Փրինթինֆո» հրատ.): Ուրբաթ օրը ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտում բացվեց Արմեն Զարյանի աշխատանքների ցուցահանդեսը, ներկայացվեց նորընծա «Արմեն Զարյան. ճարտարապետ, հետազոտող, մտավորական» գիրք-ալբոմը՝ հեղինակի ծննդյան 95-ամյակի առթիվ հայերեն եւ իտալերեն լեզուներով:

Թանգարան-ինստիտուտի սրահում Արմեն Զարյանը ներկայացված է խոշոր պաստառներով՝ կենսագրական էջերով, եւ ստեղծագործության առանձին փուլերով՝ ավստրիական շրջան (1946-49), Մարոկոյի (1950-54), իտալական (1963 եւ հետո), հայաստանյան շրջան (1964-ից):

Արմեն Զարյանին նվիրված գիրքը տպագրվել է պետպատվերով («Գրաբեր» հրատ. «Զանգակ-97» տպարան), Զարյան ընտանիքի նախաձեռնությամբ, ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի աջակցությամբ եւ գիտխորհրդի որոշմամբ, խմբագրությամբ Ռուզան Ջաքարյանի:

Գրքի՝ պայմանական երկու ծավալուն բաժինները ներկայացնում են շուրջ երկու տասնյակից ավելի հայ եւ օտար հեղինակների (Աշոտ Հայկազունի Գրիգորյան, Մուրադ Հասրաթյան, Ադրիանո Ալպագո Նովելլո, Պաոլո Կունեո, Լեւոն Չուքասզյան, Լեւոն Ձեֆիյան, Ռուզան Ջաքարյան, Վիգեն Ղազարյան, Աղասի Այվազյան, Մարկո Կլեմենտե եւ այլք) հոդվածներ՝ Արմեն Զարյանի ճարտարապետության, նրա մտավորական եւ մարդկային նկարագրի մասին: Հաջորդ բաժնում զետեղված են ճարտարապետի աշխատանքային, անձնական լուսանկարներից եւ նրա ստեղծագործություններից մի շարք՝ նախագծեր, շինարարական կառույցներ:




Ցուցահանդեսը բացեց թանգարան-ինստիտուտի տնօրեն **Աշոտ Գրիգորյանը**: Մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյանը** կարեւորեց արժեքների ճշմարիտ գնահատման չափանիշների պահպանումը, ի մասնավորի Կոստան Զարյանի եւ նրա ընտանիքի՝ մշակութային ժառանգությունն ազգային հարստություն համարեց: Նա տեղեկացրեց նաեւ, որ մշակույթի նախարարությունը պատրաստակամ է՝ ստանձնելու Կոստան Զարյանի մասին կնոջ՝ Թագուհի Զարյանի անտիպ հուշերի հրատարակությունը:

Արմեն Զարյանին հանգամանորեն ներկայացրեց որդին՝ ճարտարապետ **Արա Զարյանը**: Միջոցառմանը ներկա էր Հայաստանում Իտալիայի դեսպանը, նա նույնպես ողջույնի, գնահատման խոսք ասաց:

Մ. Բ.

# Թատերական աշունը Երեւանում

Թատերական կյանքը Երեւանում բուռն կերպով կմեկնարկի աշնանը: Սեպտեմբերի 8-20-ը կմեկնարկի Չեխովյան փառատոնը: Երկու տարի է՝ փառատոնն ընդլայնել է շրջանակները: Շարունակելով բարի ավանդույթը, բացի մոնոներկայացումներից, հանդիսատեսի դատին կներկայացվեն նաեւ մեծ կտավի գործեր: Այս տարվանից փառատոնը կկրի հանրաճանաչ դերասան Վահրամ Փափազյանի անունը: Փառատոնին կմասնակցեն թատերախմբեր Ռուսաստանից, Ֆրանսիայից, Վրաստանից եւ Իրանից:

Առանձին ծրագրով նախատեսված է ներկայացնել Ալեքսանդր Կալյագինի «Ուբյու թագավոր» եւ Իրինա Բրուկի «Դոն Կիխոտ» ներկայացումները: Կրկին փառատոնի պատվավոր հյուրերի ցուցակում է Լեհաստանի Չեխովիդյան փառատոնի տնօրեն Անջեյ Ժուրկովսկին: Վերջինս կներկայացնի չեխովյան ներկայացումների տեսագրությունների ցուցադրություններ՝ իր մեկնաբանությամբ: Կլինեն նաեւ թատերական հանդիպումներ Art Bridge ակումբում:

Սեպտեմբերի 14-ից մշակույթի նախարարությունը եւ Ազգային թատերական ստեղծագործական միավորումը Երեւանում կանցկացնեն Reading fest-process հայ արդի դրամատուրգիային նվիրված բաց փառատոն:

Թատերական միջոցառման նպատակն է ի հայտ բերել հայ հեղինակների ստեղծագործությունները, բացահայտել նոր անուններ, նպաստել ստեղծագործողների եւ բեմադրիչների համագործակցությանը:

Հ. Հ.

ԳՈՒՅԺ

# Վախճանվել է փիլիսոփա Կարպիս Քորթյանը

Օգոստոսի 28-ին Փարիզի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցում տեղի է ունեցել փիլիսոփա Կարպիս Քորթյանի հուղարկավորության արարողությունը: Նա հայտնի մտավորական էր ոչ միայն սփյուռքում (մասնավորապես Ֆրանսիայում, Կանադայում, ԱՄՆ-ում, Ավստրալիայում եւ Սիրիայում), այլեւ Հայաստանում, ուր պատրաստվում էր ժամանել սեպտեմբերի սկզբներին՝ վեց շաբաթ դասավանդելու նպատակով, ինչպես խոստացել էր անցյալ տարի՝ **«Ազգի»** հետ ունեցած հարցազրույցում:

Համառոտակի ներկայացնենք նրա կյանքը եւ գործունեությունը: Ծնվել է 1938 թ. փետրվարի 15-ին Քեսաբում (Սիրիա): Կիլիկիայի ծայրամասում՝ Ալեքսանդրետի սանջակում գտնվող Քեսաբն այն ժամանակ դեռ Ֆրանսիայի հովանավորության տակ էր: Կարպիսը սովորում է Անթիլիասի դպրեվանքում, որի այն ժամանակվա ղեկավարը հետագայում դառնալու էր Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոս: Այնուհետեւ Բեյրութի Նշան Փալանջյան ճեմարանում սովորելիս Կարպիսը աչքի է ընկնում փայլուն առաջադիմությամբ, դառնալով Հայաստանի առաջին հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանի հովանավորյալը եւ բարեկամը: Կծու հումորով հայտնի այդ գործիչը իր կյանքի մայրամուտին գրեթե կուրացել էր եւ հանդես էր գալիս միջազգային լուրերի մեկնաբանություններով, իսկ Կարպիսը նրա համար ամեն օր ընթերցում էր օտար մամուլը եւ մասնավորապես Փարիզի «Մոնդ» թերթը:

Վրացյանը նրան հորդորում է փիլիսոփայություն ուսանել Հայդելբերգում (Գերմանիա) եւ Վիեննայում (Ավստրիա): Փիլիսոփայության դոկտորի կոչում ստանալով՝ Կարպիս Քորթյանն աշխատում է Մոնրեալի (Կանադա) համալսարանում մինչեւ իր կարիերայի վերջը, միաժամանակ կատարելով Օքսֆորդի Balliol College-ի գիտական խորհրդի անդամի պարտականությունները:

Կարպիս Քորթյանը հեղինակել է Ֆրանկֆուրտի փիլիսոփայական դպրոցին նվիրված «Մետակրիտիկա» աշխատությունը, բայց անավարտ է թողել Կանտին եւ Հեգելին նվիրված երեք խոշոր հատորներ: Քորթյանը մտադրվել էր առաջիկա աշնանը հրատարակել առավելապես Critique հանդեսում լույս տեսած իր գլխավոր հոդվածների ժողովածուն: Նա թեեւ խուսափում էր ներհամայնքային կյանքի սահմանափակությունից, բայց միշտ հիշում էր սեփական արմատները, Քեսաբի բարբառը, որը հայերենի ամենադժվար խոսվածքներից մեկն է Ղարաբաղի բարբառի հետ մեկտեղ:



Քորթյանը կարողանում էր դասավանդել ֆրանսերենով, գերմաներենով, անգլերենով, ինչպես նաեւ հայերենով: Շփվելով իր ժամանակի խոշորագույն փիլիսոփաների հետ, նա եվրոպացի եւ անգլոսաքսոն մտավորականներին մասնակից էր դարձնում 1915 թ. Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին: Հայազգի փիլիսոփան հեղինակավոր անձանց ստորագրությունները կրող միջազգային մի շարք հանրագրեր նախաձեռնեց 1984 թ. ապրիլին Փարիզում անցկացված Ժողովուրդների մշտական տրիբունալի նստաշրջանի կապակցությամբ: 1988-ին նա մտավորականների եռալեզու (ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն) հանրագիր նախաձեռնեց Սումգայիթի ջարդերի դատապարտման նպատակով:

Բանավեճերի սիրահար, ջերմ ու տրտաբաց Քորթյանը մեծ տպավորություն է գործել իր հետ շփված բոլոր անձանց վրա: Նա խորապես ազդվեց իր բարեկամ Լեշեկ Կոլակովսկու մահից եւ անչափ ծանր տարավ մեկ ուրիշ մեծ բարեկամի՝ Զիվան Թաբիբյանի վախճանը:

Պ. Ք.

# Լույս կտեսնի «Ակնարկներ սփյուռքահայ արվեստի պատմության» մատենաշարի առաջին հատորը

ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն ընդունեց ամերիկահայ ճանաչված արվեստագետ, նկարիչ Քաջազունի Քեչեճյանի այրուն՝ գրականագետ, «Քաջազ» գրքի հեղինակ Սաթենիկ Քեչեճյանին, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Արարատ Աղասյանին եւ փոխտնօրեն Աննա Ասատրյանին:

ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ Արվեստի ինստիտուտում բացված սփյուռքի բաժինը նախարարության հետ համատեղ իրականացնում է «Ակնարկներ սփյուռքահայ արվեստի պատմության» մատենաշարի հրատարակումը: Արարատ Աղասյանի հեղինակած առաջին հատորը՝ «Քաջազի մոգական կանթեղը» վերնագրով մենագրությունը, նվիրված է լինելու նկարիչ Քաջազունի Քեչեճյանի կյանքին եւ ստեղծագործությանը:

Արվեստի ինստիտուտի տնօրեն **Ա. Աղասյանը** եւ **տիկին Քեչեճյանն** իրենց շնորհակալությունը հայտնեցին տիկին Հակոբյանին՝ մատենաշարի եւ մասնավորապես ճանաչված նկարչին նվիրված հատորի լույսընծայմանը աջակցելու, ինչպես նաեւ գրքի շնորհանդեսը կազմակերպելու համար:

«Մենք մեզ հետ մի փոքրիկ Հայաստան ենք տարել Գրինվիչ, ամուսնուս ստեղծագործությունները հայ ստեղծագործ մտքի արտացոլանքն են կտավներում, իսկ այդ նկարները զարդարում են Ամերիկայի մեր բնակարանը»: Նշվեց, որ այս արվեստագետի մասին բազմիցս է գրվել, սակայն նման մենագրություն, որն ամբողջությամբ ընդգրկեր ճանաչված սփյուռքահայ արվեստագետի կյանքն ու գործունեությունը, առաջին անգամ է:

Սփյուռքի նախարարն իր գոհունակությունը հայտնեց արվեստագետների ընտանիքին, որոնք տարիներ շարունակ աջակցել են Արվեստի ինստիտուտին, Երվանդ Քոչարի թանգարանին եւ հայաստանաբնակ բազմաթիվ մտավորականների՝ հատկապես ստեղծագործությունները հրատարակելու գործում:

«Սփյուռքի նախարարությունը սփյուռքահայի տունն է, մենք անում ենք ամեն հնարավորը՝ օտար երկրներում մեր հայրենիքի անունը բարձր պահող մտավորականներին աջակցելու համար», եզրափակեց նախարար Հրանուշ Հակոբյանը:

Մ. ՄԱԿԱՐՅԱՆ

AZG NEW 7.QXD 8/31/2009 10:11 PM Page 1



# «Կիլիկիան» խառնեց «Միկայի» խաղաքարտերը

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության վերջին տուրերի հանդիպումներում բավական հետաքրքրական իրադարձություններ են արձանագրվում: Բայց այն, ինչ տեղի ունեցավ 20-րդ տուրում, անկանխատեսելի եւ մեծ անակնկալ էր: Խոսքը «Կիլիկիա»-«Միկա» հանդիպման մասին է, որում առաջնության հետնապահներից մեկն արդեն առաջին խաղակեսում 3 անպատասխան գնդակ էր խփել առաջատարների շարքում գտնվող «Միկայի» դարպասը: Մինչ այդ հանդիպումը, թիմերի միջեւ անցկացված մրցախաղերում «Կիլիկիան» ընդամենը մեկ անգամ էր հաղթել «Միկային» (2000-ին՝ 3-2): Իսկ մրցակիցների միջեւ կայացած վերջին 14 հանդիպումներն էլ ավարտվել էին միկացիների հաղթանակով:




Ուստի, ֆուտբոլասերներից երեւի թե ոչ ոք չէր կասկածում , որ «Միկան» հերթական հաղթանակը կտոնի: Սակայն թիմին ծանր փորձություն էր սպասվում: Արդեն 6-րդ րոպեին «Արարատից» «Կիլիկիա» վերադարձած Սարգիս Մովսիսյանը բացեց հաշիվը: Մինչեւ ընդմիջում կիլիկիացի Կարեն Խաչատրյանը եւս երկու գոլ խփեց՝ «Միկային» դնելով անելանելի դրության մեջ: Հյուրերին այդպես էլ չհաջողվեց խուսափել պարտությունից: Ճիշտ է, վերջին 15 րոպեներին Ալեքսն ու Թադեւոսյանը կրճատեցին հաշվի տարբերությունը:

Այս հաղթանակը «Կիլիկիայի» համար շատ կարեւոր էր վտանգավոր գոտուց հեռանալու առումով: Վերջին տեղում գտնվող «Արարատը» սեփական հարկի տակ ոչ միայն չկարողացավ պահպանել հաղթական հաշիվը, այլեւ ի վերջո պարտություն կրեց՝ ավելի բարդացնելով առանց այն էլ ծանր իրավիճակը: Առաջին խաղակեսում արարատցի Արտակ Գրիգորյանը բացեց հաշիվը: Սակայն ընդմիջումից հետո «Գանձասարը» 2 գոլ խփեց ու հաղթեց: Կապանցիներից աչքի ընկան Արա Խաչատրյանն ու Զագա Սախոկիան: Այժմ «Արարատի» եւ «Կիլիկիայի» միջեւ 8 միավորի տարբերություն կա: Մնացած 8 տուրերում այն վերացնելը չափազանց դժվար կլինի «Արարատի» համար, որին սպառնում է բարձրագույն խմբին հրաժեշտ տալու վտանգը:

«Միկայի» անհաջողությունը հնարավորություն ընձեռեց «Ուլիսին» ընդհուպ մոտենալու իր գլխավոր հակառակորդին: «Ուլիսը» նվազագույն՝ 1-0 հաշվով անչափ կարեւոր հաղթանակ տոնեց «Բանանցի» նկատմամբ: Թիմի հաղթանակն ապահովեց Գագա Թբիլաշվիլու խփած միակ գոլը: Իսկ աղյուսակի առաջին հորիզոնականում իր դիրքերն ավելի ամրապնդեց «Փյունիկը»՝ 4-0 հաշվով ջախջախելով «Շիրակին»: Փյունիկցիներից աչքի ընկան Ալբերտ Թադեւոսյանը, Սարգիս Հովսեփյանը (11 մ), Դավիթ Մանոյանն ու Նորայր Սահակյանը:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Փյունիկ | 20 | 14 | 5 | 1 | 39-8 | 47 |
| 2. Միկա | 20 | 13 | 2 | 5 | 44-23 | 41 |
| 3. Ուլիս | 20 | 12 | 3 | 5 | 31-14 | 39 |
| 4. Բանանց | 20 | 10 | 2 | 8 | 27-20 | 32 |
| 5. Գանձասար | 20 | 9 | 2 | 9 | 17-27 | 29 |
| 6. Շիրակ | 20 | 3 | 7 | 10 | 16-41 | 16 |
| 7. Կիլիկիա | 20 | 4 | 3 | 13 | 17-32 | 15 |
| 8. Արարատ | 20 | 1 | 4 | 15 | 9-35 | 7 |

**Ռմբարկուներ**

| | | |
|---|---|---|
| Հենրիխ Մխիթարյան | «Փյունիկ» | 11 |
| Բոտի Դեմել | «Միկա» | 11 |
| Արամ Ոսկանյան | «Միկա» | 10 |
| Արթուր Քոչարյան | «Ուլիս» | 10 |

# Շեւչենկոն վերադարձավ հայրենիք

**Երկարատեւ ընդմիջումից հետո Անդրեյ Շեւչենկոն կրկին հանդես կգա Կիեւի «Դինամոյում», որում սկսել էր ֆուտբոլային կարիերան: 32-ամյա հարձակվողը իր հարազատ ակումբի հետ 1+2 տարբերակով պայմանագիր է կնքել: Երեկ երեկոյան նա պատրաստվում էր թիմի կազմում մասնակցել Դոնեցկի «Մետալուրգի» հետ երկրի առաջնության հանդիպմանը:**

**Վերջին տարիներին Շեւչենկոյի գործերն այնքան էլ հաջող չէին ընթանում: «Չելսիի» նոր գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին նրան տեղեկացրել էր, որ չի հայտավորելու չեմպիոնների լիգայի մրցաշարում: Մարզիչն ուկրաինացի ֆուտբոլիստին մտադիր էր օգտագործել միայն առաջնության եւ գավաթի խաղարկության հանդիպումներում: Նա նշել էր, որ թիմի հարձակվողների ցանկում Շեւչենկոն 4-րդն է Դրոգբայից, Անելկայից եւ Կալուից հետո:**




**Նման իրավիճակում Շեւչենկոն որոշեց ընդունել Կիեւի «Դինամոյի» նախագահ Իգոր Սուրկիսի հրավերն ու վերադառնալ Ուկրաինա: Դրանում Անդրեյին օգնեց նաեւ «Չելսիի» սեփականատեր Ռոման Աբրամովիչը, որը չնայած այլ ակումբից եղած հրավերին, համաձայնեց Շեւչենկոյին առանց փոխհատուցման բաց թողնել:**

**Կիրակի օրը Վալերի Լոբանովսկու անվան մարզադաշտում կայացել է Շեւչենկոյի հանդիպումը ֆուտբոլասերների հետ: «Նախ շնորհակալ եմ այն մարդկանց, որոնց օգնությամբ վերադարձա Կիեւ: Նրանք են երկու ակումբների նախագահներ Իգոր Սուրկիսն ու Ռոման Աբրամովիչը: Շնորհակալ եմ նաեւ մեր թիմի մարզիչ Վալերի Գազաեւին, որի հետ աշխատելը մեծ հաճույք է ինձ համար: Իրոք երջանիկ եմ հարազատ ակումբ վերադառնալու համար: Կյանքիս 10 տարիներն անցկացրել եմ Եվրոպայի տարբեր երկրներում: Այժմ եկել է տուն վերադառնալու ժամանակը, որպեսզի կրկին պաշտպանեմ «Դինամոյի» պատիվը, ուրախացնեմ ուկրաինացի ֆուտբոլասերներին: Ինձ լավ եմ զգում, թեեւ խաղային պրակտիկայի որոշ պակաս ունեմ», նշել է Անդրեյ Շեւչենկոն:**

**«Անչափ ուրախ եմ: Բոլորդ էլ գիտեք, որ վերջին տարիներին ձգտում էի Անդրեյին վերադարձնել հայրենիք: Եվ ահա կատարվեց երազանքս: Շնորհակալ եմ առաջին հերթին Վալերի Գազաեւին, որն ընդունելով թիմը, իմ գաղափարին դրականորեն վերաբերվեց: Մենք վերադարձրել ենք ոչ միայն Շեւչենկո ֆուտբոլիստին, այլեւ Կիեւի «Դինամոյի» խորհրդանիշին, Ուկրաինայի հերոսին: Նա իր թիմի համար այնքան բան է արել, որքան երեւի թե չի արել երկրի համար ոչ մի քաղաքական գործիչ: Նա վերադարձել է, որպեսզի օգտակար լինի թիմին: Եվ ես հավատում եմ նրան: Այսօր մենք նրան հանձնեցինք իր սիրած համարով մարզաշապիկը, որն Անդրեյին փառքի էր արժանացրել «Միլանում»: Բոլորիդ շնորհավորում եմ այս իրադարձության առիթով», նշել է «Դինամոյի» նախագահ Իգոր Սուրկիսը:**

# Ճակատագրական սխալ

**Իռլանդական Paddy Power բուքմեյքերական ընկերությունն օրերս մեծ վնաս է կրել կատարած կոպիտ սխալի պատճառով: Ընկերությունը մոտ 1,25 մլն ֆունտ ստեռլինգ է վճարել ամերիկացի հանրահայտ գոլֆիստ Թայգեր Վուդսի հաղթանակի համար խաղադրույքներ կատարած անձանց: Սակայն պարզվել է, որ այդ պահին դեռեւս մրցումները չեն ավարտվել, իսկ ավարտից հետո հաղթանակ է տոնել ոչ թե Վուդսը, այլ կորեացի Յան Յոն Յունը: Նրա հաղթանակի գործակիցը 125 էր: Ուստի բուքմեյքերական ընկերությունը ստիպված է եղել մեծ գումարներ վճարել նաեւ կորեացու հաղթանակին հավատացած անձանց: Միաժամանակ ընկերությունը խնդրել է այն անձանց, ովքեր գումարներ են ստացել Վուդսի հաղթանակի համար, հետ վերադարձնել դրանք: Սակայն նման ցանկություն հայտնողների թիվը մեծ չի եղել:**

ՇԱԽՄԱՏ

# Զաքարյանն ավելի հաջող խաղաց

**Հունաստանի Կալամարիա քաղաքում ավարտվեց շախմատի միջազգային մրցաշարը, որի մասնակիցների թվում էին Հայաստանը ներկայացնող Աղասի Ինանցն ու Դավիթ Զաքարյանը: Ավելի հաջող էր Զաքարյանի ելույթը, որը 9 հնարավորից վաստակելով 6 միավոր, լրացուցիչ գործակիցներով զբաղեցրեց 18-րդ տեղը: 8-րդ տուրում Դավիթը հաղթեց Աննա Մուզիչուկին, իսկ ավարտական պարտիան Պավել Զարազի հետ ավարտեց ոչ-ոքի:**

**Աղասի Ինանցը 5 միավորով 29-րդ տեղը գրավեց: Ավարտական երկու տուրերում նա հաշտություն կնքեց Մանուել Պետյայի եւ Գաբրիել Ֆրանչինիի հետ:**

**Մրցաշարի հաղթող դարձավ իսպանացի Մարկոս Լիանեզան՝ 9 հնարավորից վաստակելով 7 միավոր: 6,5-ական միավորով հաջորդ տեղերում են Լեւան Արոշիձեն, Ալին Բերեսկուն, Սինիշա Դրազիչը, Խանդրան Պանշանաթանը, Վալենտին Յոտովը եւ Գրիգոր Գրիգորովը:**

# Առայժմ առանց հաղթանակի

**Մոնրեալի շախմատի մրցաշարում առայժմ համեստ ցուցանիշ ունի Վարուժան Հակոբյանը: 4 տուրից հետո նա վաստակել է 1,5 միավոր եւ առայժմ չի ճաշակել հաղթանակի բերկրանքը: 2-րդ եւ 4-րդ տուրերում նա հաշտություն կնքեց Բիասի եւ Բլյուվշտեյնի հետ, իսկ 3-րդ տուրում պարտվեց Յուրի Շուլմանին:**

**3-ական միավորով առաջատարներն են Էթիեն Բաքրոն, Արկադի Նայդիչը եւ Անտոն Կովալյովը: 2,5-ական միավոր ունեն Մարկ Բլյուվշտեյնն ու Ալեքսանդր Օնիշչուկը: 5-րդ տուրում Հակոբյանը սեւերով կխաղա Ալեքսանդր Մոիսեենկոյի հետ:**

# Ռինգ դուրս կգան 9 բռնցքամարտիկներ

**Այսօր Միլանում մեկնարկում է սիրողական բռնցքամարտի աշխարհի հերթական առաջնությունը: Հայաստանի հավաքականը Միլանում պետք է հանդես գար քաշային 8 կարգերում: Սակայն մրցավայր մեկնելու վերջին պահին հավաքականի կազմը համալրվեց եւս մեկ բռնցքամարտիկով: Այնպես որ Հայաստանը ներկայացված չի լինի միայն 81 կգ եւ գերծանր քաշային կարգերում:**

**Հավաքականի կազմը համալրել է Գառնիկ Հարությունյանը, որը հովանավոր է գտել եւ հնարավորություն է ստացել մասնակցելու աշխարհի առաջնությանը: Նա հանդես կգա մինչեւ 54 կգ քաշային կարգում: Մինչ այդ, հավաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Մեհրաբյանը որոշել էր, որ 54 կգ քաշային կարգում Հայաստանը ներկայացնելու է Դերենիկ Գիժլարյանը: Վերջինս տեղափոխվել է ավելի ցածր քաշային կարգ (51 կգ):**

**Բացի վերը նշված բռնցքամարտիկներից, Հայաստանի հավաքականի կազմում ռինգ դուրս կգան 2008-ի Եվրոպայի չեմպիոն Հովհաննես Դանիելյանը (48 կգ), Ազատ Հովհաննիսյանը (57 կգ), Պեկինի օլիմպիադայի բրոնզե մրցանակակիր Հրաչիկ Ջավախյանը (60 կգ), Եվրոպայի 2008-ի չեմպիոն Էդուարդ Համբարձումյանը (64 կգ), աշխարհի գավաթակիր Անդրանիկ Հակոբյանը (75 կգ) եւ Եվրոպայի փոխչեմպիոն Յուրա Անանիկյանը (91 կգ): Մեկ անգամ եւս հիշեցնենք, որ աշխարհի առաջնության մենամարտերն ուղիղ հեռարձակմամբ կցուցադրվեն «ՀայTV» հեռուստաալիքով:**

# Ռայկոնենը «Ֆեռարիին» առաջին հաղթանակը պարգեւեց

**«Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի առաջնության 12-րդ փուլի մրցումներն անցկացվեցին Բելգիայում: 1950-ից այստեղ անցկացվող մրցումների ընթացքում մրցուղին բազմիցս փոփոխվել է: Սակայն այսօր էլ Բելգիայի Գրան պրիի խաղարկությունը համարվում է ամենաանկանխատեսելին «Ֆորմուլա-1»-ի փուլերից:**




**Բոլորից արագ եւ անվնաս մրցատարածությունը հաղթահարեց ֆինն մարզիկ Կիմի Ռայկոնենը: Դա ընթացիկ մրցաշրջանում «Ֆեռարիի» անդրանիկ հաղթանակն էր: Իսկ ահա ընդհանուր հաշվարկով առաջնության առաջատար Ջենսոն Բատոնը եւ աշխարհի ներկայիս չեմպիոն Լուիս Հեմիլտոնը չկարողացան հատել վերջնագիծը: Բատոնի բոլիդը շրջվեց, որին բախվեց Հեմիլտոնը, եւ երկուսն էլ մրցուղուց դուրս եկան: Հետագայում նրանց ճակատագրին արժանացան նաեւ Ֆեռնանդո Ալոնսոն, Յարնո Տրուլին, Ռոման Գրոժանը եւ Հայմե Ալգերսուարին: Նրանց մնում էր որպես հանդիսատես հետեւել մրցումների ընթացքին:**

**Չնայած անհաջողությանը, Ջենսոն Բատոնը 72 միավորով շարունակում է գլխավորել ավտոմրցավազքը: 56 միավորով 2-րդ տեղում Ռուբենս Բարիկելոն է («Բրաուն»): 3-րդ հորիզոնականը զբաղեցնում է «Ռեդ Բուլի» ավտոմրցարշավորդ Սեբաստիան Ֆետելը (53 միավոր), որը Բելգիայում վերջնագիծը 3-րդն էր հատել:**

**«Կոնստրուկտորների գավաթի» խաղարկությունում 128 միավորով առջեւում «Բրաունն» է: 2-րդ տեղում «Ռեդ Բուլն» է (104,5), 3-րդ ցուցանիշն ունի «Ֆեռարին» (56):**

# Թուրք ֆուտբոլիստներն անտարբեր չեն ծխախոտի եւ ալկոհոլի նկատմամբ

Թուրքիայում անցկացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքում պարզվել է, որ երկրի պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների մեկ քառորդը եւ սիրողական խաղացողների 54,2 տոկոսը ծխում են: Ընդ որում, ծխող պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների 73,8 տոկոսն օրական մեկ ծխախոտ է ծխում, 24,6 տոկոսը՝ 3-4 օրը մեկ: Հարցումն անցկացվել է 2008/09-ի մրցաշրջանին մասնակցած 360 պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների միջեւ: Սիրողական ֆուտբոլիստների 86,2 տոկոսն է օրական մեկ ծխախոտ ծխում, 7,7 տոկոսը՝ 3-4 օրը մեկ:

Ինչ վերաբերում է ալկոհոլին, ապա մեկ-երկու բաժակ խմելուն դեմ չեն պրոֆեսիոնալների 42,1 տոկոսը, սիրողների՝ 48,3 տոկոսը: Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների 54,9 տոկոսը ալկոհոլ օգտագործում է 3-4 օրը մեկ, 27,5 տոկոսը՝ շաբաթը մեկ, իսկ 2,9 տոկոսն՝ ամեն օր: Սիրողական ֆուտբոլիստների մոտ պատկերն այսպիսին է. 19,3 տոկոսն օգտագործում է 3-4 օրը մեկ, 47,4 տոկոսը՝ շաբաթը մեկ, 33,3 տոկոսը՝ ամիսը մեկ:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ

# Ծանուցում

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

***ՀՀ կենտրոնական բանկի III մասնաշենքի լուսավորության սարքերի ձեռք բերման եւ տեղադրման նպատակով կազմակերպություն ընտրելու համար բաց մրցույթի կազմակերպման մասին***

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է բաց մրցույթ` Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի III մասնաշենքի լուսավորության սարքերի ձեռք բերման եւ տեղադրման նպատակով կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձինք, որոնք ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ` ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետն է 2009թ. հոկտեմբերի 01-ը, ժամը 17-30:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամն է 2009թ. հոկտեմբերի 01-ը, ժամը 17-30:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2009թ հոկտեմբերի 09-ին ժամը 17-30:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ այլ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ Գործերի կառավարչություն Շինարարության բաժին:

Հասցե` 0010 Երեւան, Վազգեն Սարգսյան 6,

հեռ. (+37410) 56-45-53, ներքին` 18-42

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

---

Ֆլորես Աճուրդի Տուն ՍՊԸ-ն Ակսոն ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է Յունիբանկ ՓԲԸ-ի կողմից ներկայացված գույքի աճուրդային վաճառքը`

1. Բնակարան` 250.9 ք.մ.: Հասցե` ք. Երևան, Իսահակյան թաղ., 5/5-3: Մեկնարկային գինը` 45,000,000 դրամ

2. Բնակելի տուն` 204.5 քմ, հողամաս` 1421 քմ: Հասցե` ք. Վարդենիս, Կոմիտաս 16/1 տուն: Մեկն. գինը` 12,000,000 դրամ:

3. Բնակելի տուն` 873.4 քմ, հողամաս` 1170 քմ: Հասցե` ք. Եղվարդ, Չարենցի 133 տուն: Մեկն. գինը` 68,000,000 դրամ:

4. Բնակարան` 73.4 քմ, ձեղնահարկ` 74.8 քմ: Հասցե` ք. Երևան, Մաշտոցի 45ա-26: Մեկն. գինը` 78,000,000 դրամ:

5. Բնակելի տուն` 243.8 քմ, հողամաս` 500 քմ: Հասցե` ք. Էջմիածին, Թումանյան 13ա տուն: Մեկն. գինը` 27,000,000 դրամ:

6. Բնակելի տուն` 295.5 քմ, հողամաս` 340 քմ: Հասցե` Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Մարտի 8-ի 21ա տուն:

Մեկն. գինը` 26,000,000 դրամ:

7. Բնակարան` 148.1 քմ: Հասցե` ք. Երևան, Զրաշասի փող., 13-9: Մեկն. գինը` 165,000,000 դրամ:

8. Բնակարան` 83.2 քմ: Հասցե` ք. Երևան, Հարավ-Արևմտյան Բ-1 թաղ., 88-45: Մեկն. գինը` 16,800,000 դրամ:

9. Թռչնաբուծական ֆերմա` 1675.3 քմ, հողամաս` 5500քմ: Հասցե` Արմավիրի մարզ, գ. Փարաքար: Մեկն. գինը` 74,000,000 դրամ:

Աճուրդի փուլերը` դասական, այնուհետև հոլանդական եղանակներով 05.10.2009թ-ից մինչև 30.12.2009թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.13.00-ից, ք.Երևան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում:

Մասնակցության համար նախավճար չի գանձվում: Գնորդ է արձանագրվում առավելագույն գին առաջարկող անձը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել` հեռ. 56-45-13 կամ 091/ 78-18-98

***www.birja.am***

---

***«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր***

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

***♦ Օրենսդրական նորություններ ♦ Պարզաբանումներ ♦ Խորհրդատվություն***

***«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար***

**Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81**

---




## «ԳՈՐԾՔ» ՍՊԸ

## ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Աշխատակազմի կառավարման ակադեմիան կազմակերպում է ուսուցում հետեւյալ մասնագիտությունների գծով.

♦ **«Աշխատակազմի ղեկավար»**

Ուսումնական ծրագրին կարող են մասնակցել որեւէ ԲՈՒՀ ավարտած անձինք, ովքեր նպատակ ունեն ստանալու երկրորդ մասնագիտություն, ինչպես նաեւ կադրերի բաժնի աշխատողները, ովքեր ցանկություն ունեն կատարելագործելու իրենց մասնագիտական հմտությունները:

- ուսման տեւողությունը` 5 ամիս,

♦ **«Կադրային գործավար»**

Ուսումնական ծրագրին կարող են մասնակցել միջնակարգ կրթություն ունեցող բոլոր անձինք:

- ուսման տեւողությունը` 6 ամիս,

Դիմորդները ակադեմիա ընդունվելուց առաջ կանցնեն թեստավորում:

Աշխատակազմի կառավարման ակադեմիայի վկայական ստացած անձինք կտիրապետեն`

- ♦ կադրային գործավարության եւ ընդհանուր փաստաթղթաշրջանառության կազմակերպման ձեւերին,
- ♦ գործատուի ներքին եւ անհատական իրավական ակտերի (հրամանների, կարգադրությունների, հանձնարարությունների, գրաֆիկների, ժամանակացույցերի, (հերթափոխային, արձակուրդային, բժշկական զննության եւ այլն), ծանուցումների, աշխատանքային, կոլեկտիվ եւ քաղաքացիաիրավական պայմանագրերի, համաձայնագրերի եւ այլն) մշակման օրենսդրական տեխնիկայի կանոններին,
- ♦ մրցույթներ եւ ատեստացիաներ կազմակերպելու մեթոդաբանությանը եւ իրականացման առանձնահատկություններին,
- ♦ կադրային հաշվապահությանը (աշխատավարձ` այդ թվում գործավարձ, ժամավարձ, սոցիալական վճարներ, եկամտահարկ, արձակուրդայիններ, գործուղումներ, ժամանակավոր անաշխատունակության նպաստներ, վերջնահաշվարկ եւ այլն),
- ♦ հայտեր եւ հաշվետվություններ կազմելու եւ պետական մարմիններին ներկայացնելու իրավական մեխանիզմներին:

«Աշխատակազմի կառավարման ակադեմիայի» վկայական ունեցող անձինք կունենան.

- ♦ բարձր պահանջարկ ունեցող մասնագիտություն,
- ♦ լավ վարձատրությամբ աշխատանք,
- ♦ կայուն սոցիալական կարգավիճակ,
- ♦ հասարակության մեջ բարձր դիրք:

Ուսման ընթացքում բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողները կտեղավորվեն աշխատանքի:

Աշխատակազմի կառավարման ակադեմիան իրականացնում է քաղաքացիական ծառայության մրցույթների նախապատրաստման լրացուցիչ կրթական ծրագիր` 1 ամիս տեւողությամբ:

Ունկնդիրները ուսման ընթացքում կուսումնասիրեն` ՀՀ Սահմանադրությունը, «Քաղաքացիական ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» եւ «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքները, կստանան համակարգչային գիտելիքներ, այսինքն այն, ինչ անհրաժեշտ է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարված մրցույթներին մասնակցելու եւ հաղթող ճանաչվելու համար:

Պահանջվող փաստաթղթերն են`

- ♦ անձնագրի պատճենը,
- ♦ կրթության մասին վկայականի պատճենը,
- ♦ 1 հատ 3 x 4 չափսերի լուսանկար:

Դիմումներն ընդունվում են ամեն օր, բացի շաբաթ եւ կիրակի օրերից` ժամը 10:00 18:00-ը:

Դիմումներ ընդունող հանձնաժողով

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք զանգահարել կամ այցելել`

«ԳՈՐԾՔ» ՍՊԸ



Հասցե` ք. Երեւան, Սարմենի 1շ. 2/1, 0009
Հեռ. (010) 56 18 56, 519 005, 519 008
Ֆաքս (010) 56 72 93
E-mail: gortsq@gortsq.am ; gortsq@mail.ru
URL: www.gortsq.am ; www.gortsq.com

---

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ 2009/2010 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

| Ծածկագիր | Մասնագիտություն | Ընդունելության քննություններ | | | | ընդ. տեղ | վարձ (հազար դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Մրցութային | | | Ոչ մրցութային | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| **01** | **ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ** | | | | | **990** | |
| 010100 | Մաթեմատիկա | Մ(գ) | Ֆ(գ) | | Հլ(գ)* | 10 | 180 |
| 011000 | Ակտուար մաթեմատիկա | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ(գ) | | 15 | 250 |
| 010400 | Ինֆորմատիկա եւ կիրառական մաթեմատիկա | Մ(գ) | Ֆ(գ) | | Հլ(գ)* | 15 | 250 |
| 010600 | Ֆիզիկա | Ֆ(գ) | Մ(գ) | | Հլ(գ)* | 10 | 180 |
| 011200 | Ռադիոֆիզիկա եւ էլեկտրոնիկա | Ֆ(գ) | Մ(գ) | | Հլ(գ)* | 10 | 180 |
| 020900 | Էկոլոգիական ֆիմիա | Ք(գ) | Կ(գ) կամ Ֆ(գ) | | Հլ(գ)* | 10 | 180 |
| 021000 | Դեղագործական ֆիմիա | Ք(գ) | Կ(գ) կամ Ֆ(գ) | | Հլ(գ)* | 25 | 280 |
| 020300 | Երկրաբանություն | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլ(գ)* | 25 | 180 |
| 020200 | Կենսաբանություն | Կ(գ) | Ք(գ) կամ Ֆ(գ) | | Հլ(գ)* | 20 | 180 |
| 020400 | Աշխարհագրություն | Ա(գ) | Մ(գ) | | Հլ(գ)* | 20 | 180 |
| 020500 | Քարտեզագրություն եւ կադաստրային գործ | Ա(գ) | Մ(գ) | | Հլ(գ)* | 20 | 250 |
| 100100 | Սերվիս | Ա(գ) կամ ՀԺՊ(գ) | Հլգ(գ) | Օտլ(գ) | | 20 | 220 |
| 030400 | Պատմություն | ՀԺՊ(գ) | ԸՊ(գ) կամ Օտլ(գ) | Հլ(գ) | | 50 | 200 |
| 031500 | Արվեստաբանություն | ՀԺՊ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 25 | 230 |
| 031400 | Մշակութաբանություն | ՀԺՊ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 15 | 230 |
| 030700 | Միջազգային հարաբերություններ | ՀԺՊ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 60 | 350 |
| 030200 | Քաղաքագիտություն | ՀԺՊ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 60 | 300 |
| 032000 | Հանրային կառավարում | ՀԺՊ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 50 | 300 |
| 080100 | Տնտեսագիտություն | Մ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 80 | 300 |
| 081800 | Կառավարում | Մ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 40 | 300 |
| 030300 | Հոգեբանություն | Կ(գ) | Հլգ(գ) | Օտլ(գ) կամ Ռլ(գ) | | 35 | 280 |
| 040100 | Սոցիալական աշխատանք | Մ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 15 | 230 |
| 031000 | Հայոց լեզու եւ գրականություն | Հլգ(բ) | Հլ(գ) | ՀԺՊ(գ) կամ Օտլ(գ) | | 80 | 180 |
| 030600 | Լրագրություն | Սմ(գ) | Հլգ(բ) | Օտլ(գ) կամ Ռլ(գ) | Հլ(գ) | 30 | 220 |
| 032400 | Ռուսաց լեզու եւ գրականություն | Ռլգ(բ) | Ռլ(գ) | Հլ(գ) | | 40 | 220 |
| 031300 | Անգլերեն լեզու եւ գրականություն | Անգլ(բ) | Անգլ(գ) | Հլ(գ) | | 105 | 320 |
| 031300 | Իսպաներեն լեզու եւ գրականություն | Օտլ(բ) կամ ԻՍ(բ) | Օտլ(գ) կամ ԻՍ(գ) | Հլ(գ) | | 45 | 300 |
| 030500 | Իրավագիտություն | Հլ(գ) | ՀԺՊ(գ) | Օտլ(գ) | | 45 | 450 |
| 031900 | Աստվածաբանություն | ՀԺՊ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 15 | 200 |

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են 2009թ. օգոստոսի 10-ից մինչեւ սեպտեմբերի 20-ը:

Ընդունելության քննություններն անցկացվում են 2009թ. հոկտեմբերի 10-ից մինչեւ հոկտեմբերի 20-ը:

Դիմորդի քննությունների ժամանակացույցը կախված չէ փաստաթղթերը հանձնելու օրից:

Դիմում-հայտի հետ դիմորդը ներկայացնում է. ա) միջնակարգ կրթության ատեստատ (բնօրինակը), բ) 6 լուսանկար (3x4սմ չափսի), գ) անձը հաստատող փաստաթուղթ, դ) փաստաթուղթ զինվորական ծառայության հետ առնչության մասին, ե) միասնական քննությունների վկայագիրը(առկայության դեպքում), զ) տեղեկանք 2009թ. կենտրոնացված ընդունելության քննությունների գնահատականների վերաբերյալ, է) 2009թ. հեռակա ուսուցման ընդունելության կանոնների 29-30-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի եւ մինչեւ 18 տարեկան մանկուց հաշմանդամության, ինչպես նաեւ զինծառայող ծնողի զոհվելու, ծնողական խնամքից զրկվելու մասին):

Փաստաթղթերի ընդունման ժամկետը լրանալուց հետո դիմորդների կողմից լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելն արգելվում է:

Հեռակա ուսուցման տեւողությունը 5 տարի է` բակալավրի ծրագրով:

Դիմորդին իրավունք է վերապահվում պահպանելով 2009թ. կենտրոնացված եւ միասնական, ինչպես նաեւ 2008թ. միասնական կարգով հանձնած քննական առարկայի (առարկաների) գնահատականը (գնահատականները) տվյալ առարկայից (առարկաներից) հանձնել քննություն: Այդ դեպքում հաշվի է առնվում դիմորդի ստացած առավել բարձր գնահատականը:

**ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ`**

Երեւան, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ մարզահամալիր:

Ընդունող հանձնաժողով: Հեռ. 55 50 41

*ԵՊՀ ռեկտորատ*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 31.08.2009, գինը` 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: